

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՅԱԶՐԵԼ

ԼԵՐԱՆ

ԳԱՂՏՆԻՔԸ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

891.99

7867

U-85

Kruthsmill.

Gymnoph. pinnae gymnopeltis
4p

ԱԼԵՐՍՈՒՆԴՐ ԱՐԱԳՈՒՄԱՆ

891.99-93

Ա.85

Հ 08069437 Է 1981 թ.

ԳՅԱԶԲԵԼ

ԼԵՌԱՆ

ԳԱՂՏՆԻՔԸ

ՎԻՊԱԿ

A 5216
1/1



Z U 3 T E S Z R U S

ՀԼԿԵՄ ԿԿ ԿՐ 8 ՄԱՆԿԱԿԱՏԱՐԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1946

Պատաճի ընթերցողներին. խնդրում եմ ձեր տպավորություններն ու ցանկություններն այս վիպակի մասին ուղարկեցեք ինձ հետևյալ հասցեով—Երևան, Գրողների Տուն:

ՀԵՂԻՆԱԿ

Ա. АРАКСМАН
ТАЙНА ГЯЗБЕЛА
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946 г.

1. ԱՄԱՌԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Տաք և գեղեցիկ ամառ էր:

Վաղուց է այսքան շատ կանաչ ու ծաղիկ չէր եղել այստեղ: Իսկ անտառներում այնքան վայրի ընկույզ, կաղին ու մասրենի կար, որ տեղացիներն ամեն առիթով այդ մասին էին հիշատակում: Իսկ մերկամարմին, սրագագաթ լեռնաբեկորներն այնպես էին տաքանում արևի կրակից, որ օրվա վերջին անկարելի էր նրանց ձեռք տալ, ասես շիկացած էին:

Միայն Գյաղքել սարի արոտավայրերն էին, որ անընդհատ շոյվում էին մեղմանուշ քամու անտես ձեռքերով: Սառնորակ ջրերի երակներն էին խայտալով հոսում այնտեղ և տիրում էր մի երանավետ անդորրություն: Սարը բարձր էր, այնքան բարձր, կարծես կարելի էր հեծնել իշ-

նող ամպերին՝ ու նրանց վրա սահել, հեռու, հեռու, դեպի անիմանալի հեքիաթ աշխարհներ:

Ահա այստեղ, բարձր Գյազրելի կանաչ արոտներում, գարնանից մինչև ուշ աշուն ժամանակավոր բնակություն էր հաստատում Տ. գյուղի կոլխոզի անասնաբուծական ֆերման: Մի քանի ամիս այստեղ շարժում էր, կյանք, ուրախություն, բառաշ, մայուն, երգ, պար, սընդիմեղրածոր հնչյուններ...

Ապա գերեզմանային ամայություն, երբ հովիվները, ֆերմայի աշխատողները, կովկիթները, խնոցի հարողները, անասնաբույժը և մյուսները Գյազրելից իջնում էին տուն... Գորշ ամպերի կայծակների և հետո սառը, ճերմակ ձյան թագավորությունն էր սկսվում այնտեղ, սոված գայլերի իշխանությունը, մինչև գալիք ծաղկազարդ գարունը:

Մեր պատմության հերոսները՝ Սոսիկն ու Բենիկն այս տարի առաջին անգամ էին բարձրացել Գյազրել: Հաջողությամբ ավարտել էին դպրոցական քննությունները, փոխադրվել հաջորդ դասարանը և բարձրացել իրենց մայրերի մոտ: Մայրերը կովկիթներ էին, իսկ իրենք ոչ-

խարների ու այծերի մի ամբողջ հոտ էին արածեցնում։ Սոսիկն ու թենիկը հասակակիցներ էին, նշաճե սև աշք-ունքով, կլորիկ այրված դեմքերով։ Տարրերվում էին նրանով, որ Սոսիկը խարտյաշ էր և իր ընկերոջից մի երկու մատբարձրահասակ։

Գյազբելի վրա ոչ ոք իրեն այնքան երջանիկ չէր զգում, որքան Սոսիկն ու թենիկը։ Նրանց համար այստեղ ամեն ինչ հրաշալի էր, հեքիաթային։ Ամբողջ օրը, լուսածեգից մինչև երեկո լինելով բաց երկնքի տակ, նրանք հմայվում էին բնության փոփոխական, բազմազան երևույթներով։ Իսկ այդ երևույթները նման չէին այն ամենին, ինչ նրանք տեսել էին ներքեւում, իրենց գյուղում, նրա շրջակայքում, նույնիսկ խորհրդավոր ու մռայլ անտառի գրկում։ Ահա թե ինչու նրանց անսովոր աշքի համար այստեղ ամեն ինչ հրաշք էր, անմեկնելի ու գեղեցիկ։

Լուսաբացին, գրեթե ամեն ժամանակ Գյազբելը ծածկված էր լինում մշուշի մի հսկա շղարշով։ Այդ այն պահին էր, երբ գյուղում եղած ժամանակ Սոսիկն ու թենիկը լեռը չէին տես նում։ Եզրեմն մշուշն այնքան թանձր էր լինում,

որ անհնար էր լինում իրար նշմարել։ Ապա մշու-
շի միջից թափանցում էին արևի առաջին շողերը։
Նրանք տարօրինակ փայլ ունեին։ Երեխաները,
երբ ոչխարների և այծերի հոտերն առաջները
գցած շարժվում էին, անհամբերությամբ սպասում
էին այդ շողերին—նրանք խոստանում էին լույս
ու զերմություն։

Օրը բացվում էր և բացվում էին նորաձե-
գեղեցկություններ։ Մշուշը փարատվում էր և
ինչպես ափի մեջ երևում էր Հայաստան լեռնաշ-
խարհը, յուր վսեմությամբ ու խստությամբ։ Սո-
սիկն ու Բենիկը սիրում էին նայել ներքեւ ու
սքանչանալ։ Հեռվում տեսնում էին մի բուռ սեր-
մերի նմանող բազմաթիվ գյուղեր, որոնց թվում
իրենցը, գորգերի նման փուփած խայտաբղետ
դաշտակտորները—հասուն արտերը, բանջարա-
նոցները, այգիները, ծխախոտի հողամասերը,
լեռների ստորոտներին մամուռի նմանող կանա-
չագորշ անտառներն ու վերջապես նրանց ափե-
րին աղմուկով զարնվող, հսկա քարաբեկորների
հանդիպելիս ճանապարհն անընդհատ ոլորող
Որոտանը։ Նրանք, երեխաները, որոնող հա-
յացքներով փնտում էին, ծանոթ վայրերը և երբ

մոտավորապես գտնում էին, խայտում էին, ճշ-
շում, աղմկում ու գրավում որոճող անասումնե-
րին, որոնք մի պահ դադարելով ծամելուց, ան-
իմաստ հայացքներով նայում էին ոգևորված
փոքրիկ հովիվներին:

Կեսօրվան մի անսովոր բզզոց էր տարած-
վում չորս կողմը: Կարծես ամբողջ աշխարհի
բզզանները հավաքվել էին Գյաղքելի վրա: Բզեզ-
ները, մեղրաճանճերը, ճպուռները մի այնպիսի
երաժշտություն էին սկսում, որ կարծես նվա-
գակցում էին Սոսիկի շվիկին, որն այս ժամին
փշում էր արտակարգ հափշտակությամբ: Իսկ
նվագում էր բավականին վարժ: Նվագում էր
դպրոցում սովորածը՝ երգեր, քայլերգներ, իսկ
երբեմն էլ հարսանյաց պարեղանակներ: Թշնեցն
էլ ավելորդ տեղն ուռեցնում էր, երեխ զուռնաշի
կիզրանց Արշակին նմանվելու համար: Այս միակ
ժամն էր, որ փոքր ինչ արևն այրում էր, և Սո-
սիկն ու Բենիկը հանելով բաճկոնները, պառկում
էին մեջքի վրա, փափախներով աշքերի վրա
ստվեր գցում և երկար նայում երկնքի կապույ-
տին: Նրանք վերհիշում էին աշխարհագրության
ուսուցչի, ընկեր Զաքարի հետաքրքրական պատ-

մովագումները երկնքի, տիեզերքի, արևի, երկրագնդի, լուսնի և այլ մոլորակների մասին։ Ու թըվում էր նրանց, թե հիմա նրանք շատ մոտ են այդ ամենին, շատ մոտ, հարկավոր է միայն մի կախարդական սանդուխք, մի պարան, որպեսզի հասնեն։

Հաճախ նրանց գլխի վերևը, շատ մոտիկից Հախրում էին բազեները, իսկ երբ երևում էին արծիվները, երեխաներն անհանգիստ աղմուկ էին բարձրացնում։ Լսել էին, որ այդ գիշատիչ թըռշումներն ունեն այնպիսի հզոր մագիլներ, որ կարող են մաքի, կամ ուղիկ փախցնել։

Իջնող իրիկունն էլ իր հմայքն ուներ այստեղ։ Ամեն ինչ կարմրում էր։ Ասես անտես հրդեհների արտացոլումն էր տարածվում։ Արևի մայրամուտը սքանչելի էր։ Արևը գլորվում էր այնտեղ, լեռների ետև, իսկ այստեղ ամեն բան գորշանում, ստվերանում։ Զարմանալի բան, գամփուացու Զալոն սիրում էր այդ ժամին երկար հաջալ։ Տիրովթյունից, որ մութը տիրում էր, թե՝ ուրախությունից, որ վերադառնալու են իրենց վրանները, դժվար էր որոշել։

Մինչև վերադառնում էին, բոլորովին մթնում

էր: Երեխաներին փարուսների նման գրավում էին խարուկները, որ վառվում էին իրիկնահացի համար: Մթության մեջ բոցկլտող այս կրակներն անգամ Սոսիկի ու Բենիկի համար առանձին գրրավություն ու հմայք ունեին: Հոտը տեղավորելուց հետո նրանց առաջին գործն էր վազելով, գրեթե գլխկոնծի մոտենալ իրենց վրանի լառաց վառվող խարույկին, ծալապատիկ նստել նրա առաջ և անթարթ հայացքներով, մինչև արտավահար լինելը, երկար նայել ճարճատող բոցագալար ճյուղերին: Թվում էր նրանց, թե այս խարույկները փոքրիկ արևներ էին, իսկ արեի վրա բազում, բազում այսպիսի խարույկներ էին վառված: Ապա նրանց մայրերը՝ Հոռոմսիմը և Հայկանուշը սեղան էին բաց անում: Ռւտելուց հետո երեխաներն անհամբերությամբ սպասում էին Բախչի ամուն: Իսկ նա երեկո չէր լինում, որ հերթով շմոտենար խարույկներին, ծանրախոն չնստեր, չիբուխը չփստացներ ու որևէ հետաքրքրական պատմություն չաներ: Նա զանազան գաղտնիքներ ու ավանդություններ գիտեր Գյազբելի մասին, անսպառ, մեկը մեկից գեղեցիկ և հետաքրքրական:



Խոսում էր նաև պատերազմից, չարուց, բարուց, խրատներ էր տալիս երեխաներին, բարի գիշեր մաղթում և հեռանում։ Նա ֆերմայի պահակն էր։ Նրան մի հին հրացան էին տվել և որպես փորձված մարդու կարգել գիշերական պահակ։

Շատ հաճախ Բախշի ամին միսիթարում էր ֆերմայի այն կանանց, որոնց որդիները, ամուսինները, կամ հարազատները ուազմաճակատում էին։

Սոսիկի հայրը և Բենիկի եղբայրը ուազմաճակատում էին։ Վաղուց նրանցից տեղեկություն շկար։ Հոռոմսիմն ու Հայկանուշը հատուկ ջերմությամբ ու սիրով էին շրջապատում Բախշի ամում, որովհետև նրա ասած խոսքը համոզիչ և հուատու էր։

Բայց Գյազբելի վրա միշտ այսպես խաղաղ ու հանգիստ չէր։ Մեկ էլ տեսար իշնում էին սկզբությամբ ամպերը։ Սոսիկին ու Բենիկին թվում էր, թե ամպերը կարող են բռնել, շոշափել, բայց միշտ զգալով պատրանքը՝ հիասթափվում էին։ Իսկապես այդ ամպերը շատ մոտ էին, իրենց գլխին և իրենցից ներքև, բայց ոչ բռնել կարելի

էր, ոչ շոշափել։ Հենց որ փոթորկի սպառնալիքն
ակնբախ էր դառնում, ինչպես երեխաներին նա-
խապես զգուշացրել էին, հոտը քշում էին քարափ-
ների մեջ ու ծվարում հսկա ժայռարելորների
տակ։ Ամպերի գոռոցը, կայծակների փայն ահա-
վոր էր։ Թվում էր, թե պատովել է աշխարհի
կործքը և այնտեղից կրակ է ժայթքում։ Հապա-
երը քամին էր բարձրանում և ունում... Դա ավե-
լացնում էր տարերքի ուժը, նրա ահեղ մոնշունը։
Երեխաները, երթ դեռ անսովոր էին, վախենում
էին, հետո սովորեցին, թեև ամեն անգամ դարձ-
յալ կուշ էին գալիս, ու մինչև անձրևի, փոթորկի
վերջը լոելով, չեին համարձակվում նույնիսկ ի-
րար երես նայել։

Երբ ամեն ինձ խաղաղվում էր, ծիածան էր
իշնում և ահեղագոշ աղմուկին փոխարինում մի
սքանչելի անդորրություն՝ երեխաները դուրս էին
վազում պատսպարանից, «զա՞ն—զա՞ն» կանչում,
իրար էին գրկում, փաթաթվում խոնավությունն
իրենց վրայից թոթափող ոշխարներին, կարծես
մի նոր երջանկություն էր, բացվել։

Սակայն, Գյազբելում իրար հաջորդեցին
դեպքեր, որոնք եկան լրացնելու երեխաների, այս
ամառ ստացած տպավորությունները...
12

Ահա, այդ խորհրդավոր դեպքերի մասին է,
որ պատմելու եմ ձեզ:

2. ԱՅԴ ՕՐՆ ՈՒՐԱԽ ԷՐ...

Իսկապես, երջանիկ և ուրախ էր այդ օրը
Սոսիկի և Բենիկի համար: Կեսօրին էր, երբ Բե-
նիկը նկատեց, որ ներքեւ կածանով մի հեծյալ
է բարձրանում:

— Սոսիկ, — կանչեց նա, — մի նայեր, է՞ն
ո՞վ է...

Սոսիկը նայեց ընկերոջ ցույց տված կողմը:
Լեռնալանջերին տիրող ստվերների մեջ դժվար էր
որոշել հեծյալի ով լինելու: Նրանք անհամբերու-
թյամբ սպասեցին այնքան, մինչև եկվորն ընկալ
արեի շողերի տակ:

— Միսիթարն է... — աղաղակեց Սոսիկը և
տեղից թռավ:

Բենիկն ու Զալոն վագեցին նրա ետևից:
Միսիթարը Սոսիկի եղբայրն էր, կոլխողի բրի-
գադիրներից, եղել էր ռազմաճակատում, վիրա-
վորվել էր և այժմ վերադարձել աշխատելու: Նա
մի բարձրահասակ, թիկնեղ երիտասարդ էր:

Երեխաներն ընդառաջ վագեցին Միսիթարին:

— Մայրիկն ո՞ւ է... — ձիուց չիշնելով
հարցրեց Մխիթարը, դեմքին մի արտակարգ
ժպիտ:

— Ի՞նչ կա, — հարցրեց Սոսիկը:

— Հայրիկից նամակ ենք ստացել...

Սոսիկն ուրախությունից ճշաց: Էլ չսպասեց,
թռավ ձիում, նստեց եղբոր ետևում և խթանեց:

— Բենիկ, հոտին նայիր, ես հիմա ետ
կգամ...

Եղբայրները հեռացան, իսկ Բենիկի սիրտը
մի տեսակ ճմլվեց: Նա իհարկե ուրախ էր, որ իր
մտերիմ ընկերոջ Հայրը կենդանի է և նրանից
լուր ստացվեց: Սակայն նա հիշեց իր եղբորը՝
Արտոյին, որից նույնպես վաղուց ոչ մի տեղե-
կովթյուն չկար: Ինչո՞ւ նրանից էլ լուր չեկավ, ին-
չո՞ւ: Հիմա իր մայրն այս առիթով նորից լաց
կլինի, կտանջվի... Բայց չէ՛, այս լավ է, եթե
Սարո քեռուց լուր եկավ, անպայման մի օր էլ Ար-
տոյից կգա: Այն ժամանակ ինչ լավ կլինի: Իրե-
նից անկախ, Բենիկի աշքերը լցվեցին արցունք-
ներով: Նա գլխիկոր մոտեցավ արածող հոտին,
նստեց, գլուխը դրեց ծնկներին և այդպես մնաց:
Իսկ արցունքները վազում էին:

- Ա՞ս, ախպեր ջան, մի լուր էլ դո՛ւ տայիր... — Մեկ-մեկ հառաշում էր նա: Հետո երեսնիվայր ընկնելով սկսեց բարձրածայն լալ: Ապա քունը տարավ ու քնեց: Արթնացավ, երբ մեկն սկսեց հրել նրան: Տեսավ Սոսիկն է, մեղավորի նման անմիջապես վեր ցատկեց և ուղղեց շապիկը:
- Բա կքնե՞ն... էս ի՞նչ է, լա՞ց ես եղել:
- Ախպորս հիշեցի, — խոստովանեց Բենիկը:
- Մի մտածի, ախպեր ջան, մի օր էլ նա նամակ կգրի: Շուտ արա, հոտը քշենք, քաղաքից թատրոն է եկել...
- Յա'...
- Բա'... Մի ակնոցավոր մարդ կա, ասում են փորիցը պիտի խոսա, համ էլ պստիկ, ճստիկ մարդիկ խաղացնի...
- Յա, սուտ է:
- Շո՛ւտ արա...
- Բենիկը վիշտը մոռացավ և երկու ընկեր հոտն առաջները գցած շտապեցին քաղաքից եկած թատրոնը տեսնելու:
- Հեռավոր քաղաքից Գյազբել էր եկել դերա-

սանների, երգիշ-երգչուհիների մի շրջիկ բրիգադ, սարեցիների համար համերգ տալու։ Այն ակնոցավոր դերասանը, որի մասին ասաց Սոսիկը, տիկնիկավար էր և որովայնախոս, որի արվեստը, իրոք մեծ բավականություն պետք է պատճառեր ոչ միայն երեխաներին։

Հյուրերին նախաճաշ տալուց հետո համերգն սկսվեց։ Որպես բեմ ծառայում էր մի բարձրադիր տափարակ, իսկ «դիտարահը» փոքր ինչ զարիվայրի վրա գտնվող տարածությունն էր։ Հողից դուրս ցցված բազմաթիվ կանաչավուն, չեչոտ քարերի վրա նստուեցին ֆերմայի աշխատողները։

Երաժիշտները նվագեցին։ Մի երգչուհի երգեց ժողովրդական երգեր։ Մի դերասան կարդաց Հայրենական պատերազմին նվիրված բանաստեղծություններ։ Նույն երգչուհին ու երգիչը միասին կատարեցին Անուշի և Սարոյի դուետը։ Ապա պարեցին։ Վերջում հանդես եկավ ակնոցավոր որովայնախոս-տիկնիկավարը։ Իհարկե սա ամենից հետաքրքրականն էր։ Նա նստեց ծալովի աթոռակի վրա, ձեռն առավ մի մեծ տիկնիկ, որը ներկայացնում էր 1944 թվի Հիտլերը և սկսեց

խոսել: Դերասանի բերանը չէր շարժվում, մինչդեռ տիկնիկը ծամածովում էր, հսկայական բերանը բաց ու խուփի, անում և, ո՞վ զարմանք, մարդու նման խոսում... Սոսիկն ու Բենիկը զարմանքից բերանները բաց էին արել: Նրանք նույնիսկ մյուսների նման չէին ծիծաղում, այնքան տարօրինակ էր թվում դերասանի կատարածը: Այս համարից հետո տիկնիկավարն անհայտացավ, այսինքն մտավ փոքրիկ շիրմայի հետեւ և սկսեց զեկավարել, — շունչ հաղորդել փոքրիկ տիկնիկներին: Նրանք շատ զվարճալի բաներ կատարեցին. պարեցին, դագանակներով իրար գլուխ շարդեցին, մեկը մեռավ, մյուսը դագաղ բերեց և տարավ թաղելու: Մեռածը կենդանացավ և այն է ներկայացումը պետք է հասներ իր վախճանին; Երբ «դիտասրահում» երևաց Բախշի ամին հուզված, անհանգիստ:

— Սոսիկ, Բենիկ, — ամբողջ ձայնով աղակեց նա:

Դերասանը շիրմայի հետեւից գլուխը հանեղ, ստուգելու համար, թե ով խանգարեց իրեն: Հանդիսատեսները բողոքեցին: Իսկ Բախշին անտար-

1864
1-5216

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

բեր այս ամենին, մոտեցավ երեխաներին, քաշեց
նրանց ձեռքից ու տարավ իր ետևից:

— Ո՞ւր, ո՞ւր...—ձայն տվին այս ու այն
կողմից:

Մեջ մտան մայրերը: Բախչի ամին նրանց էլ
չպատասխանեց, շարունակում էր իր կոշտ ու չոր
ձեռքով քաշել Սոսիկի ձեռքից, իսկ սա էլ իր
հերթին քաշում էր Բենիկին: Նրանց ետևից վա-
զում էր Զալոն, որ երեխ նույնպես դարմացած
Բախչի ամու կոպությունից, ատամները բաց
արած գոմում էր, փնչացնում ու շարունակում
հետևել փոքրիկ տերերին:

Կանգնեցին ոչխարի հոտի առաջ:

— Նայեցեք էրեխաներ...—կարգադրեց Բախ-
չին: Ներկայացումը տեղափոխվեց այստեղ:
Բախչուն և երեխաներին բոլորեցին ոչ միայն
տեղացիները, այլև քաղաքից եկածները: Ինչ որ
արտասովոր բան էր կատարվում:

— Հաշվեք...— նորից կարգադրեց Բախչին:
Մինչդեռ երեխաները վախեցած մի պահ իրար
նայեցին, հայացքով չափեցին հոտը ու մնացին
լուս:

— Զալիկ ոչխարն ո՞ւր ա... — Հարցապնդեց
ծերունին:

Բոլորը վրա ընկան և սկսեցին փնտռել:
Չգուան: Իսկապես, հայտնի «Զալիկ» ոչխարը
շկար: Զալոն մտավ հոտի մեջ, կարծես նա էլ էր
փնտռում: Այո՛, մեկ ոչխար պակասում էր:

— Դե, ձե՛ն հանեք...

Սոսիկն ու Բենիկը կարմրել էին: Ոչինչ չէին
կարող ասել, որովհետև ոչինչ չգիտեին:

Ֆերմայի վարիչ Վարդաղարը երեխաներին
տարավ իր վրանը:

Այսպես վերջացավ ուրախ օրը...

3. ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏԱՔԵՑ

Փաստը կատարված էր:

Մինչև ուշ երեկո կորած ոչխարը փնտռեցին:
Վերադարձան ձեռնունայն: Հետքն անդամ չգտան:

Սոսիկն ու Բենիկը կուշ եկած սպասում էին:
Նրանց թույլ շտվին որոնումներին մասնակցելու:
Անհամբերության մեջ տապակվող երեխաներն
աղերսող հայացքով նայում էին որոնումներից
վերադարձողներին ու սպասում, որ կլսեն —
«գտանք-գտանք»: Սակայն ոչ ոք չասաց այդ եր-

շանիկ բառը՝ Նրանք խիստ հայացք էին պցում
մեղավորների վրա և հեռանում:

Վարդազարի հարցաքննությունը հետևանք
շունեցավ, որովհետև երեխաներն անտեղյակ էին
պատահարին:

Հանկարծ Սոսիկը մտաբերեց, որ Բենիկին
մենակ թողեց, իսկ երբ վերադարձավ — ընկերը
քնած էր: Նա նայեց Բենիկին, ուզեց միտքը
հայտնել, բայց զսպվեց, որպեսզի այդ գաղտնիքը
ոչ ոք չիմանա: Ըստ երեսութին Բենիկն էլ նույնն
էր մտածում, թե չէ ինչո՞ւ այդպես մեղավորի
նման էր նայում ընկերոջը:

Բախչի ամին, որին այնքան սիրում էին եր-
կումն էլ, ծանր խոսքեր ասաց իրենց:

— Բա նամուս շունե՞ք երեխեք... Բա մենք
տանջվում ենք, որ մեր հարստությունը փիլու բա-
ժին դառնա... Հա՛, գելն է տարել, զե՞լը... Փոր-
սող է տվել, բռնել ոչխարի դմակից ու տարել...
Բա դո՞ւք ուր էիք, ա՛ երեխեք... Ուշքներդ տվել
էիք քամո՞ւն... Էն էլ էսօրվա ուրախ օրը...

— Էլ չեն անի, Բախչի, չեն անի, սխալվել
են...— ցավակցորեն վրա էին բերում երեխանե-
րի մայրերը, ապա «վաշ ու վիշ» անում:

— Պատիկ ժամանակը իսկի ոշխար չե՞ս
տվել գիլուն... Հարցրեց Հովհակ Գասպարը և ծի-
ծաղեց:

Բախչին շպատասխանեց: Մոայլ հեռացավ:

Երեկոն իջափ Խարուցկ շվառվեց երկար ժա-
մանակ: Հետո Հոռոմսիմը և Հայկանուշն սկսեցին
պատրաստություն տեսնել իրիկնահացի համար:

— Այս ինչպե՞ս պատահեց, ինչպե՞ս,—բա-
լորի գլխում այդ հարցն էր մեխված:

Վաղուց է այստեղ գայլեր չեին երկացել:
Ապահով էին զգում: Այժմ սպառնալիքն ակներն
էր: Սա դեռ սկիզբն էր, որի հետ կարելի էր
հաշտվել, ավելի տագնապալին այն էր, որ կա-
րող էր շարունակվել: Եթե իսկապես գայլերի մի
ամբողջ ոհմակ է լուս ընկել, ի՞նչ պիտի անեն:

Խարուցկները ճարճատեցին: Բոցերը երկինք
բարձրացան և վարդագույն ներկեցին իրիկնային
մշուշը: Բոլորի ականջը ձայնի էր, արդյոք մո-
տերում չե՞ն թափառում հարամիները, սոված
գայլերը, չե՞ն պատրաստվում վաղն ավելի մեծ
վնաս հասցնելու կողիողին:

Վարդագարը եկավ հայտնեց, որ Սոսիկն ու

ԲԵՆԻԿԸ կարող են գյուղ վերադառնալ։ Հոտը նը-
րանց վստահել այլևս չի կարելի։

Երեխաներն ամբողջ գիշերը շքնեցին։ ԲԵՆԻ-
ԿԸ լաց եղավ, լուս, գլուխը խոտերի մեջ։ Սոսիկը
նրա ականջին շշնջաց։

— Էդ փորձանքը քնածդ ժամանակն է պա-
տահել...

ԲԵՆԻԿԸ շանթվածի նման նստեց և մթության
մեջ բռնեց ընկերոջ ձեռքը։ Ինքն էլ նույնն էր
մտածել։ Այո, քնած ժամանակ, քնած ժամա-
նակ...

— Մարդու բան չեմ ասի, մի՛ վախենա...—
սիրու տվեց Սոսիկը։ Բայց ես համաձայն չեմ
գյուղ գնալ, ամոթ է, կխոսան, կասեն շալիկ
ոշխարը գիլու բաժին տվիք ու հետ եկաք... Արի
վարդազարին խնդրենք...

Այդպես էլ վճռեցին։ Եվ միայն ուշ գիշեր-
վան, իրենց վճռից փոքր ինչ հանգստացած քոն
մտան։

Արթուր էր միայն ծերունի Բախշին, որի
գլխից այնուամենայնիվ չէր հեռանում ծակող
միտքը։

— Ախր ո՞նց պատահեց... Ու կոթնած հրա-

ցանին նայում էր խավարի մեջ, կարծես իր
հարցի պատասխանն էր փնտռում։ Նրա ոտքերի
տակ ննջում էր հսկա գամփող, իսկ խարույկը
շարունակում էր ճարճատյունով լափել շրացած
ճյուղերը։

4. ՆՈՐ ՀԱՆԵԼՈՒԿ

Վարդազարը բարի էր, ընդառաջ գնաց երե-
խաների խնդրին, թողեց, որ մնան յայլայում,
բայց այնուամենայնիվ հոտը նրանց շվատահեց։
Սոսիկն ու Բենիկը առայժմ բավարարվեցին դրա-
նով։

Նրանք շարունակում էին քնից վեր կենալ
նույն ժամերին և նախանձով էին նայում հովիվ
Գասպարին, որին հանձնարարված էր իր հոտին
խառնել նաև Սոսիկի ու Բենիկի հարյուր գլուխ
ոչխարն ու այծը։ Մի քանի օր հետո նրանք սկսե-
ցին դաշտ գնալ Գասպարի հետ։ Զալոն էլ անբա-
ժան էր։ Գասպարն օգտվելով հանգամանքից, ե-
րեխաներին զանազան հանձնարարություններ էր
տալիս. մոտիկ ձորակից ջուր էին բերում, Սոսի-
կը շվիկ էր նվազում, Բենիկը հոտից հեռացող

շարաճճի այծերի ետևիթ էր ընկնում ու հետքերում։ Մի խոսքով ինչ որ Գասպարի մտքով անցներ՝ կատարում էին։

Կատարում էին, սակայն «շալիկ» ոշխարին չէին մոռանում։ Մի ծանրություն կար նրանց մատաղ սրտերին, մի մտահոգություն երբեմն կընձռուտում էր նրանց պայծառ ճակատները։

— Բա նամուս շունե՞ք, երեխեք...— շարունակ նրանց ականջին հնչում էր Բախշի ամու նախատինքը։

Այսպես անցավ մեկ շաբաթ։ Կատարված դեպքը մոռացության տրվեց։ Եղբակացրին, որ պատահական գայլ էր լույս ընկել, կշտացավ ու շրվեց, գնաց ուրիշ սարեր։ Բախշին դարձավ առաջվա նման բարեհամբույր։ Երեկոները խարուցկի առաջ շարունակում էր պատմություններ պատմել, խրատներ կարդալ։

Մի գիշեր սարսափելի քամի բարձրացավ։ Բոլորն արթնացան։ Քիչ էր մնում վրանները պոկեր-տաներ։ Սոսիկն ու Բենիկը լսում էին քամու վայունը և աշքերը լայն բացած նայում վրանի անկայուն պատերին, որոնք առագաստի նըման փրվում ու ճոճվում էին։

Հանկարծ քամին բերեց շների կատաղի հազոցի ձայներ։ Հաջն անսովոր էր Սոսիկն արմունկով հրեց Բենիկին, որը նոր էր քուն մտել Վերջինս ըստ իր սովորության անմիջապես ցատկեց, նստեց իր տեղում։

— Ականջ արա, — ասաց Սոսիկը։

Բենիկը լսողությունը սրեց։ Իսկապես, յայլայի բոլոր շներն արթնացած մի այնպիսի հաջէին բարձրացրել, որ խլացնում էին քամու ոռնոցը։

— Գելեր Աինե՞ն... — ենթադրեց Բենիկը։

Սոսիկը վեր կացավ, հագավ բաճկոնակը։ Բենիկը հետևեց նրան։

— Չալո՞՝ Չալո՞... ձայն տվեց Սոսիկը իրենց շանը, որ սովորություն ուներ քնելու, կամ վրանի առաջ, կամ երեխաների ոտքերի տակ։ Չալոն չկար։ Ըստ երեսութին շտապել էր մասնակցելու շնահաջին։

Երեխաները նոր էին դուրս եկել վրանից, երբ պարզ լսեցին հրացանի կրակոց։ Ո՞վ կարող էր լինել, եթե ոչ Բախչի ամին։ Սակայն ի՞նչ պատահեց, ինչո՞ւ կրակեց։

— Հա՞յ, հարա՞յ, հասե՞ք, հասե՞ք... — նո-

րից քամու թևերով եկավ մի սրտապատառ աղաւնակ:

Սոսիկն առանց երկար-բարակ մտածելու նետվեց ձայնի կողմը, իսկ թենիկը շփոթությունից ուշքի գալով ներս վազեց վրան, մթության մեջ գտավ երկու շամփուր և նորից գուրս թռավ:

— Ո՞վ է... թենիկ... Ո՞ւր... — ձայն տվեց մայրը:

— Գելե՛րը, գելե՛րը — դրսից պատասխանեց թենիկը և վազեց Սոսիկի ճանապարհով:

Ֆերման ոտքի կանդնեց: Քնահատ մարդիկ նախ իրար էին հարցնում, թե ինչ է պատահել, ապա անորոշության մեջ վազում էին թախշի ամու պահակատեղը: Եթե հրացան էր կրակվել, նշանակում է դեպքն պետք է այնտեղ կատարված լիներ:

Թախշի ամին երեխայի նման վազվզում էր ու անընդհատ կրկնում.

— Հասե՛ք, հասե՛ք...

— Գե՛լ էր, թախշի, հարամի է՛ր, թախշի, հարցնում էին այս ու այն կողմից:

— Հասե՛ք, հասե՛ք... — շարունակում էր ծերունին, կարծես ցնորված:

— Բա գիլու ետևից մարդ կհասնի⁸, — ասաց
Դասպարը:

— Ինչի՞ կրակեցիր, Բախշի...

— Տեսա՞ր գելերին...

— Մե՞կ էր, թե սուրու էր...

Եկավ ֆերմայի վարիչ Վարդաղարը: Խավա-
րում դժվար էր ստուգել, թե անասուններին վնաս
հասել է՞ր, թե ոչ: Այդպես խոնվեցին մինչև լու-
սաբաց: Քամի էր, ցուրտ, բայց ոչ, ոք չվերա-
դարձավ քնելու: Բենիկը շամփուրներից մեկը
հանձնեց Սոսիկին և նրանք իրենց լիակատար
զինված զգացին:

Լուսաբացին ստուգեցին տեսան, որ ճիմա էլ
մի այծ է պակսում:

— Ախր ի՞նչ տեսար, մի պատմիր Բախշի:
ամի, — Հարցրեց Վարդաղարը:

— Որ ասեմ բան տեսա, հոգուս մեղք՝ կա-
նեմ, — Հուզմունքից դողացող շուրթերով խոսեց
ծերունին: Էն լսեցի, որ Դեվիկս (խոսքը գամփոի
մասին է) հաջալով ծով եղավ, սկսեց բերան
պատռելու շափ հաջել... Բոլոր շներն իրար
եկան... Ասի գել է, ուզեցի կրակել, հրացանն էվ
սրա մերը շմեռնի, շկրակեց... Դեվիկս թռավ

առաջ, մեկ էլ վնգստալով ետ փախավ... Կրակեցի... էս է. մնացածն էլ դուք գիտեք...

Դեվիկը չկար: Ենթադրեցին, որ գայլեր փախցրել են: Բայց քիչ հետո նրան դուան մի քարի տակ անշնչացած: Գլուխը շարդված էր: Ինչպես կարող էր գայլը շան գլուխ շարդել: Գառտնիք էր: Մի՞թե գայլեր չեին: Հապա ո՞վ: Մա ըդ էր: Ի՞նչ գործ ուներ մարդն այս ամայի վայրում, Գյազբելի ահավոր քարափների ու ձորերի մեջ, բաց երկնքի տակ, բնության արհավիրքին ենթակա: Իսկ շո՞մը... Գուցե պատահաբար է գլուխը շարդվել: Ինչպե՞ս պատահաբար... Հանելովը մնաց հանելով:

Ամբողջ յայլան մտահոգվեց: Սոսիկն ու Բենիկը նույնպես ընկան մտատանշության մեջ: Բարձրագագաթ Գյազբելում տիրեց մի տեսակ ուզմական գրություն:

Վարդաղարը ժողով կանչեց, խոսեց այն մասին, որ հարկավոր է աշալուրջ լինել, զգույշ, ցերնկային և գիշերային հերթապահություն սահմանել: Հանելովների պոշը պետք է գտնել, կծիկը քանդել:

Քասպարն առաջարկեց սարիցն իշնել, վե-

րադառնալ գյուղ։ Նրան միացան մի քանի կանաչք։ Մեծամասնությունը դեմ դուրս եկավ։ Ֆերմայի աշխատանքներն ու պլանները կապված էին արոտավայրերի հետ, ոչ մի դեպքում զիչել ու նահանջել չէր կարելի։ Հարկավոր էր միացյալ ուժով գտնել վնասների պատճառը և ոչնչացնել։

Մշակվեց աշխատանքային ծրագիր։

Սոսիկն ու Բենիկը մեջ ընկան, խնդրեցին, որ իրենց գիշերային հերթապահ նշանակեն։ Ծիծաղեցին։ Վարդապարը համաձայնվեց կարգել նրանց ցերեկային հերթապահների օգնականներ երեխաներն այդ բանի համար էլ գոհ մնացին։ Առանձնապես ծանր դրության մեջ էր Բախչի ամին։ Մեռած էր—թաղված չէր։ Մի շաբաթ առաջ ինքն էր նախատում, այժմ իրեն էր համարում նախատինքի արժանի։ Ամենից ավելի խուսափում էր Սոսիկից ու Բենիկից, իսկ սրանք հակառակի պես հետապնդում էին ծերունուն։

— Բան չկա, Բախչի ամի, հարամուն կդրտնենք, կգտնենք... միսիթարում էին երեխաները խեղճ ծերունուն։

Բախչին լուր էր, ինքնամփոփ, մոայ... Նա հանդիսավորությամբ փոս փորեց, թաղեց գամ-

փըռին։ Թաղմանը ներկա էին Սոսիկն ու Բենիկը։ Բախչին նույնիսկ արտասվեց, ապա երկար նստած հողաթմբի մոտ իր երկար ժիբուխն էր փստացնում։

5. ԱՆՀԱՅՏԱՎԱՎ...

Օրերն անցան, առանց հիշատակության արժանի որևէ դիպվածի։

Բախչիի հետ կատարված դեպքի հաջորդ օրը ֆիրմայի վարիչ Վարդաղարը սարից իշավ, գյուղ գնաց, կատարվածի մասին հայտնելու և միջոցներ ձեռք առնելու համար։

Սարում հսկողությունը եռապատկվեց։ Բոլորն զգաստ ու զգոն էին։ Ով ինչով կարող էր «զինվել» էր։ Հարամի էր, թե ավաղակ, հարկավոր էր պաշտպանել կոլխոզի սեփականությունը։ Բոլորը հասկանում էին, որ ժողովրդական ունեցվածքի պահպանումը օգնություն է ուազմաճակատին, Կարմիր Բանակին։

Սոսիկն ու Բենիկն իրենց ցերեկային հերթապահությունը կատարում էին շամփուրներով։ Շայրերը քաբի վրա սրել ու փայլեցրել էին, ամ-

րացրել գոտիներից և այնպես հպարտ էին քայլում, կարծես գեներալի թուր էին կախել։ Նրանք չգիտեին, որ իրենց հերթապահությունը ձևական է։ Ֆերմայի աշխատողներից, օրը մեկը, անկանությաներեխաներից ցերեկային հերթապահ էր նշանակվում։ Այդ հերթապահը և՛ երեխաներին էր հըսկում, և՛ շրջապատը, բայց այնպես, որ նրանք չնկատեն։

Սոսիկն ու Բենիկն ամբողջ օրը պատվում էին յայլայի շրջակայքում, երբեմն շատ էին հեռանում, մտնում ձորակները, հետամուտ ամեն մի կասկած հարուցող բանի տնտղում էին յուրաքանչյուր քար, թուփ, փոս... Մի շաբաթը լրանում էր բայց ոչ մի հետք չէին գտել։ Ամեն ինչ խաղաղ էր, հանգիստ, օրերը պայծառ էին, արել զերմ, գիշերներն էլ լուսին...

Մեր հերոսները շատ էին վշտացած, որ իրենց չի հաջողվում ոչ մի հետք գտնել։ Ստիպված զոռ էին տալիս իրենց երևակայությանը, երբեմն թվում էր նրանց, թե ահա, այնտեղ, այն ժայռակտորի հետևում մեկը թաքնված է, շարժվում է... Անմիջապես դուրս էին քաշում, «թրերը», մի հարմար դիրք գրավում ու սպասում։

Երկար էին սպասում, ապա սիրտ անելով, շընչ-
ները պահած մոտենում էին ժայռակտորին։
Պարզվում էր, որ ցցված փշածաղիկներ են, որ
քամուց օրորվելով ուշադրություն էին գրավում։

Մի քանի օր հետո Վարդազարը վերադար-
ձավ կոլխոզի նախագահ Սերոբի և կոլխոզի
պարտիական կոմիտեի քարտուղար Անթառամի
հետ։ Նրանք տիտոր էին երևում։ Խուափում էին
Հարցերին պատասխանելուց։ Իրիկվան դեմ երե-
քով մտան Սոսիկենց ու Բենիկենց վրանը։ Հո-
ռոմսիմն ու Հայկանուշը, որ կովերը նոր կթել,
վերադարձել, իլիկ էին մանում, տեղերից վե-
կացան, խոնարհ գլուխ տվեցին, տեղ պատրաս-
տեցին, որ եկողները նստեն։

— Հը, խե՞ր լինի, — Հարցրեց Հայկանուշը,
Բենիկի մայրը։

Սոսիկն ու Բենիկը ուշադրություն դարձած
նայում էին կոլխոզի նախագահին։ Կարծում էին
արդեն տեղեկություն կա ոչխարների հափշտա-
կության մասին։

— Արտոյից լուր ստացանք, — ծանրությամբ
սկսեց Սերոբը։

Հայկանուշն իրեն կորցրեց։

— Արտոյի՞ց... Բալայիցու... Ո՞ւր է... Ի՞նչ
է գրում: Վայ թե լավ բան չի գրում, թե չէ կը-
շնորհավորեիք, յա ծիծաղ կգար երեսներիդ: Ի՞նչ
է պատահել, դե ասեք, մի մաշեք սիրտս...

Թենիկի շունչը կտրվում էր: Սոսիկն էլ ան-
հանգիստ էր: Նա մտավ մոր թեկի տակ և սպա-
սողական հայացքով նայեց կոլխոզի նախագահի
մոայլ դեմքին:

Լոռվթյունը շարունակվում էր:

— Անթառամ ջան,— դիմեց Հայկանուշը
արտուղարին,— գոնե դու ասա, դու էլ մեր էս,
հասկանաս իմ դրությունը:

Անթառամը խոսեց:

— Էսպես է Հայկանուշ ջան, նամակն ըն-
թերն է գրել...

— Ինչի՞... Զեռք շունի՞՝ աչք շունի՞՝ — սրտա-
պատառ աղաղակեց մայրը:

— Գրում է, որ վիրավոր է, հա, ծանր վի-
րավոր... — Հեալով շարունակեց Անթառամը, —
վաղուց պառկած է...ու ընկերն է գրում...

— Վա՞յ բալա՞ ջան, վա՞յ... և սկսվեց լաց
ու կոծը:

Վարդապարը, Սերոբն ու Անթառամն իրար
նայեցին:

— Հայկանուշ քույրիկ, միսիթարվի՛ր, միսի-
թարվի՛ր... մեր գեղի պատիվը շգցեց... Խեղդված
ձայնով միսիթարելու փորձ արեց Սերոբը,—
պարծեցիր որ էղպիսի աղիզ տղա ես տվել հայ-
րենիքին:

— Մամա ջան, լաց մի լինի, կլավանա,
կգա... արտասուքը հազիվ զսպելով միշամտնց
թենիկը և նույն վայրկյանին շուռ եկավ, որ
ներկաները շտեսնեն իր արցունքները:

Մութը որ ընկավ, ամբողջ ֆերման հավաք
վեց մի մեծ խարուցկի մոտ ու ծալապատիւ-
նստեցին: Սերոբը ժողովի էր կանչել: Խորհրդա-
վոր էր ու լուռ: Ոչ ոք շգիտեր, թե խոսքն ինչ
մասին է: Սերոբը գրպանից մի թուղթ հանեց,
հազաց, ապա խոսեց:

— Ֆրոնտից մեզ նամակ են գրել... Ուզում
եմ կարդալ...

Եվ կարդաց.

Գրում էր հրամանատարությունը: Նա S.
գյուղի կոլխոզնիկներին պատմում էր իրենց հա-
մագյուղացու, մի երիտասարդի քաջության և

անվեհերության մասին։ Ն զորամասը կանգ էր
առել։ Թշնամին իր ամրությունից գնդացրով
հնձում էր։ Զոհեր շատ եղան։ Մի քանի անգամ
գրոհի անցան, սակայն անհաջող։ Հարկավոր էր
չեղոքացնել թշնամու կրակակետը։ Եվ մինչ կո-
րոշվեր, թե ով հանձն կառնի այդ դժվարին գոր-
ծը, մեկը սողաց դեպի կրակակետը։ Դա Տ.
գյուղի երիտասարդ սերժանտն էր։ Նա մոտեցավ
կրակակետին, ամբողջ հասակով բարձրացավ ու
գոռալով «կեցցե Հայաստանը» մարմնով փակեց
գնդացրային կետը։ Հետևեց հերոս Մատրոսովի
օրինակին։ Կրակակետը չեղոքացավ։ Ն զորամասը
գրոհի անցավ և հաջողությամբ գրավեց բարձուն-
քին, բարձր, բարձր... նա ստացավ Սովետա-
կան Միության Հերոսի կոչում։ Հրամանատարու-
թյունը շերմ խոսքեր է ուղղում հերոսի ծնողնե-
րին ու այն կազմակերպություններին, որոնք
դաստիարակել են այդպիսի հայրենասերի։

Սերոբը վերջացրեց։

— Ո՞վ է, ո՞վ է... ձայն տվին այս ու այն
կողմից։

— Ո՞վ է .. ինքնաբերաբար աղաղակեց Բենիկը:

— Ոտի կանգնեցեք, ընկերներ, հարդենք մեր հերոսի, Արտավազդ Դրավունցի անմահ հիշատակը...

Հայկանուշը ճշաց... Ուշաթափւկեց: Բոլորն իրար խառնվեցին:

Առավոտը Բենիկը չկար, անհայտացել էր: Զարմանալին այն էր, որ Բենիկի հետ միասին նորից անհայտացել էր մի գեր ոչխար: Դրությունը բոլորովին լրջացավ: Հարկավոր էր ամբողջ Գյաղքելը ոտքի տակ տալ...

6. ՀԵՅՔԵՐՈՎ

Ի՞նչ պատահեց Բենիկի հետ:

Գիշերն աշքերը շփակվեցին: Մայրը շատ լաց եղավ: Սոսիկն էլ լուռ էր, հետո գլուխը կոխեց վերմակի տակ ու չիմացավ, քնե՞լ էր, թև խոսել չէր ուզում: Ու երբ ամեն ինչ լոեց, խաղաղվեց, կանայք վրանից հեռացան, մայրն էլ շատ լաց լինելուց ուժաթափ ու հոգնած թմրության մեջ ընկավ, Բենիկն սկսեց մտածել անցածի մասին:

Արտոն սպանվել էր, իր ազիզ Եղբայրը...
իսկ ինքն սպասում էր, որ Սոսիկի հոր նման մի
լուր կուղարկի:

— Ախ, Արտո, ախակեր ջան, էլ քեզ չե՞մ
տեսնի... մըմնջաց Բենիկը, ապա քիթ ու բերանը
բարձի մեջ մխրճելով անձայն լաց եղավ: Խեղդ-
վում էր: Գլուխը բարձրացրեց: Վրանում լուր էր
ու սարսափելի խավար, միայն դռան արանքից
ներս էր թափանցում լուսնու միայնակ մի ճա-
ռագայթ: Պառկել չէր լինում: Բենիկը զգույշ տե-
ղից բարձրացավ, հագավ գուղաներն ու շտիկ-
ները, վերցրեց իր հովվական փոքրիկ մահակը,
շր միշտ պահում էր անկողնու տակ և ոտքեր/
յաթերի վրա վրանից դուրս եկավ:

Դրսում ազատ շունչ քաշեց: Լիալուսինը ո-
ղողել էր ամբողջ Գյազբեկը, մեղմ, դուրեկան
քամին խաղաց Բենիկի ճակատին թափված սև
մազերի հետ: Նա սկսեց քայլել ու մտածել:

— Որ ֆրոնտում լինեի, կգտնեի իմ ախապորը
սպանող ֆաշիստին ու... Ու ի՞նչ կաներ: Կսպա-
նե՞ր: Ոչ, քաշ կտար, կրերեր այստեղ, Գյազբեկ,
կկանգնեցներ այն բարձր քարին, պահակներ

կնշանակեր իրենց բոլոր գամփոներին, կհավաք-
վեին ամբողջ կոլխոզով ու դատ կանեին: Դատա-
վորը կլիներ Բախչի ամին: Ու կորոշեին այն
քարափից ձորը գլորել: Ինքը Բախչի ամուց կը-
խնդրեր, որ դատաստանի իրավունքն իր ձեռքը
տան: Իհարկե չէին մերժի: Թոկը կգցեր ֆաշիս-
տի վիզը, քաշ կտար քարափի գլուխը, կասեր—
«Ես սերժանտ Արտավազդ Դրավունցի եղբայրն
եմ... Քո գնդացիրն սպանեց նրան...» Ու ոտով
կհրեր...

Այսպես մտածելով Բենիկն ահագին հեռա-
ցել էր, երբ սթափվեց մի տարօրինակ ձայնից.
Նայեց չորս կողմը, բայց ոչինչ շտեսավ: Չորս
կողմն ամայի էր, միայն մեծ-մեծ քարակտոր-
ներն էին, որ իրենց երկար ու ձիգ ստվերներով
կարծես կենդանացել, մարդ էին դարձել: Նրանք
զանազան ձևեր ունեին, որ հիշեցնում էին, կամ
հսկաների, կամ հերիաթական արարածների:

Բենիկի մեջքով սարսուռ անցավ: Քրտինքը
սառել էր և այժմ դողում էր: Սրտով ուզեց, որ
Սոսիկը կողքին լիներ: Ուզեց վերադառնալ հետ,
երբ նորից ականջին հասավ նույն տարօրինակ
ձայնը, կարծես խոտերի միջով կենդանի էր

շարժվում։ Բենիկին մի պահ պաշարեց վախը։
Նա անցավ քարերից մեկի ետև ու թաքնվեց։
Հեռում էր... նրան թվաց, թե իրենից ոչ շատ հեռ-
ուու ընկած քարերից մեկը շարժվեց... Բենիկը
հայացքը լարեց, ապա քիչ մնաց ճշար, շարժվո-
ղը մարդ էր, որի սև ուրվագիծն էր երևում լուս-
ուու լույսի ֆոնի վրա։ Կուցած շարժվում էր ու
տնքում, կարծես մի ծանր բան էր քաշում։

— Ո՞վ է,— մտածեց Բենիկը,— մերոնցից,
ո՞ն չտա՞մ... Հանկարծ մերոնցից չինի... Զէ՛,
վելի լավ է ձեն չհանեմ։ Բա շիմանա՞մ ով է,
ո՞նչ է ուզում, ո՞ւր է գնում...— Այս մտածեն
է գործի դիմելը մեկ եղավ։ Անձանոթ մարդ
ինց որ անհայտացավ քարերի ետևում, Բենիկը
տեղից պոկվեց, վազեց նրա ետևից և հենց որ
նորից տեսավ, ընկնելով ծնկների վրա սկսեց
սողալ։ Սողում էր ու մտածում։

— Որ մերոնցից լիներ ինչի՞ էսպես գողի
նման պիտի գնար... Զլինի՞ թե... Ու հանկարծ
Բենիկի միտքը պայծառացավ. Հիշեց իրենց կո-
րուտները, ոչխարների ու այծի հանելուկային
անհայտանալը։ Ավելի գոտեպնդվեց, աշխատում
էր անձանոթին տեսադաշտից դուրս շթողնել։ Իսկ



նա սողում էր շատ դանդաղ, դժվարությամբ, երբեմն կանգ էր առնում ու լուսավոր ու խաղաղության մեջ լսվում էր նրա շնչառապ հևոցը: Այժմ Բենիկը պարզ ու որոշ նկատեց, որ անծանոթ մարդը բեռ ուներ, բեռն էլ շարժվում էր, ասես նրա ձեռքից պոկվել, փախչել էր ուզում: Ու երբ մի անգամ էլ անծանոթ մարդը դադրած կանգնեց, Բենիկը պարզ տեսավ, որ նրա բեռը մի ոշխար էր: Այժմ ամեն ինչ պարզ էր:

— Ի՞նչ անեմ,— նորից մտածեց տղան, — Հավա՞ր կանչեմ... Շների՞ն իմաց տամ... Հանկարծ փախչի... ոշխարը թողնի ու ինքը փախչի... Ա՞յս, ի՞նչ անեմ...

Մարդը նորից շարժվեց և երեխ իրեն արդեն ապահով զգալով, ոտի ելավ, ոշխարին գրկեց, որը վկայում էր նրա մեծ ուժի մասին և զառիվայրով սկսեց իջնել դեպի ձորը: Բենիկի աշքից կորավ:

— Պիտի գնամ ետևից, իմանամ ո՞ւր է գնում... — որոշեց նա ու վազելով հասավ զառիվայրին:

Հափշտակիչն արագ իջնում էր: Բենիկը հետևեց նրան: Հանկարծ ոտի տակից մի քար

պոկվեց, որն իր հետ չ գրավելով մանր քարեր
սկսեց գլորվել: Բենիկը վախեցած կուշ եկավ,
անշարժացավ, նմանվեց շորս կողմն ընկած քա-
րերին: Մարդը կանգնեց, շուռ եկավ ու հետա-
մուտ նայեց շորս կողմը: Այդպես մի քանի րո-
պե կանգնելուց և ոչ մի վտանգ շտեսնելուց: Հե-
տո, ճանապարհը շարունակեց: Իջնելով ձորը
նա սկսեց հեռանալ աղմկող գետի—Որոտանի
երկարությամբ, դեպի մոտիկ անտառը: Բենիկը
որոշեց չիջնել, որովհետև այդ վտանգավոր էր,
այլ քայլել վերևից, նրան զուգահեռ և այդպես
հետապնդել: Թոշելով մի քարից մյուաը Բենիկն
առաջ էր գնում: Գնում էր ու մտածում—«Ահ,
հիմա Սոսիկն ինձ հետ լիներ»... Հետո իր ցան-
կովթյան համար փոշմանեց,—«Չէ, լավ է, որ մե-
նակ եմ»:

Անտառին հասնելով խորհրդավոր մարդը
նորից կանգնեց, նայեց շորս կողմը և փոքր ինչ
այդպես մնալուց հետո, ոչխարը գրկած մտալ
ծառերի մեջ ու կորավ: Բենիկն աշքերը պատովի-
լու շափ լայն բացած նայում էր ներքև, ձորի մեջ
փոված անտառի մոտ կանգնած անծանոթին: Երբ

վերջինս կորավ տեսադաշտից, թենիկն արագ սկսեց իջնել ձորն ի վայր:

Նա իհարկե կարող էր ապահով վերադառնալ, մեծերին իմաց տալ, իրեն վտանգի շենթառկել, սակայն այս պահին նաև այդ ամենի մասին չէր մտածում: Հետաքրքրությունը քաշում, գրավում էր նրան: Թենիկն արդեն երևակայում էր, թե ինչպես առավոտը Բախչի ամին կհամբուրի իր ճակատը, երբ արդեն բռնած կլինեն գողին (թենիկն արդեն հավատացած էր այդ բանում): Բռնորդ կասեն,— ապրե՛ս թենիկ, ապրե՛ս, եղբորդ արժանի դարձար:

Այնքան խորասուզվել էր իր այս մտքերի մեջ, որ սկզբում չնկատեց, թե ինչպես ուղիղ իր կողմն է գալիս այն մարդը, որը քիչ առաջ անտառ մտավ: Երբ նկատեց, արդեն բոլորովին մոտ էր և փախչելու, մանավանդ թաքնվելու հնարավորություն չկար: Ուշ էր: Թենիկը քարացած սպասում էր, թե ինչ է պատահելու: Մի ակնթարթում նրա մտքովն անցավ.

— Ա՞յս, Սոսիկ...

• • • • • • • • • • • • •

Մարդը կանգնեց նրա առաջ՝ Նա երիտասարդ էր բարձրահասակ, հաղթանդամ, Զեռքերը դրած ետևին դաժան հայացքով նայում էր երեխային:

7. ՄԻ ԹԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՈՒՍԸ

Բենիկի անհայտանալուց հետո, ամբողջ յայլան ոտքի կանգնեց: Այևս չէր հետաքրքրում ոշխարի կորչելը, բոլորի միտքն ու հոգսը Բենիկն էր: Մորը, որն այդ օրը հիվանդ էր ու վրանից դուրս չէր եկել, ոշինչ շհայտնեցին:

Ենթադրողներ եղան, որ Բենիկը գժություն է արել, սարից իջել, գյուղ է գնացել: Սակայն այդ ենթադրությունը զրվեց գյուղից սարն եկած կոլխոզնիկ Սարգսի կողմից, որը սայլով կաթնամթերք էր տեղափոխելու գյուղ:

Տագնապը մեծանում էր: Շատ պտույտ էկան, ձայն տվին, շներ գցեցին, օգուտ շունեցավ, Բենիկի հետքը չգտան: Բոլորից ավելի անհանգիստ էր Սոսիկը: Զալոյի հետ նա էլ շատ փնտռեց: Ամեն անգամ երբ աշքը չէր օգնում, Սոսիկը ձեռքերը պահած բերանի մոտ, կոկոր-

դում որքան ուժ ուներ գոռում էր, կանչում —
— էհե՞յ... էհե՞յ... թենի՞կ... թենի՞կ...

Այդ կանչի վրա Զալոն հաջում էր, պոչը
խաղացնում ու խելոք հայացքով մեկ նայում տի-
րոջը, մեկ այն հեռում, որտեղ կորշում էր Սոսի-
կի պատանեկան հնչուն ձայնը: Մեկ-մեկ Սո-
սիկին թվում էր, թե իր կանչին անմիջապես հա-
ջորդում էր պատասխանը,

— Սոսի՞կ... իիի՞կ...

Բայց դա խաբուաիկ էր. Սոսիկի կանչի ար-
ձագանքն էր միայն: Երեխան հիասթափվեց:
Սկսեց արտասվել: Հանկարծ նրա մտքով անցավ
մի սարսափելի բան. մի գուցե այն գայլը, որ
հափշտակել է ոչխարին, իր հետ է տարել նաև
թենիկին:

Նա վազեց Բախշի ամու մոտ:

Բախշին Սոսիկից հետոյ յայլայում երկրորդ
մարդն էր, որ ընկել էր ծանր մտածումների
մեջ: Առավոտը հենց որ պարզվել էր ոչխարի
կորուստը նա ուղղակի դիմել էր ֆերմայի վարիչ
Վարդազարին ու ասել.

— Վարդազար զան, քեզ մատաղ, երևում ա

շատ եմ ծերացել, ազատիր, սարիցն իշնեմ...Ես
խայտառակվեցի...

Վարդազարը Բախչիին միիթարելու և հա-
կաճառելու համար խոսք չգտավ։ Ստիպված նր-
րան ազատեց գիշերային պահակությունից, միա-
ժամանակ նախազգուշացնելով, որ սարից չիշնի։

Սոսիկը Բախչիին գտավ մոայլ, մտահոգ, մի
քարի վրա նստած, շիբուխը ձեռքին։

Սոսիկը լուռ նստեց նրա կողքին, ուղղակի
գետնի վրա, իսկ Զալոն մտավ Բախչիի ոտների
արանքը և ուղեց գուրգուրվել։ Լոռությունը երկար
տևեց, կարծես թե ծերումին չէր նկատում նրանց
ներկայությունը։ Վերջապես Սոսիկը սիրտ արեց
ու խոսեց։

— Պապի, բա դու ոչինչ չտեսա՞ր, չիմա-
ցա՞ր...

— Դու էիր պակաս,— մրթմրթաց Բախչիին ու
ահագին ծուխ ներս առնելով, կամաց, կամաց
բեղերի ու մորուքի միջից դուրս տվեց։ Եվ հե-
տո, երկի իր խստությունից փոշմանած, դարձավ
Սոսիկին. գլուխս կկտրեմ, թե որ մի բան արժե,
բայց՝ էս գելի բան չէ, էստեղ մարդու մատն ա
խառը, մարդու...

— Մարդու... — զարմացած հարցրեց Սուսիկը ու մտածեց. ի՞նչ մարդ, ինչո՞ւ պետք է մարդը Գյազբել գար ու ոչխար փախցներ... լավ, բա Բենիկը... — ու բարձրածայն դիմեց ծերունուն, — Պապի, բա Բենիկը...

— Բենիկը... — ծոր տվեց Բախչին, շիբուխը զարկելով ձեռքի ափին դատարկեց ու լոեց:

Զգալով որ ծերունուց ոչինչ չի կարող իմանալ Սոսիկը հեռացավ ու շարունակեց թափառել: Այս անգամ վճռեց ավելի հեռու գնալ:

Օրը թեքվել էր: Մի մեղմ քամի էր սվավում խոտերի մեջ: Ահա մի ինչ որ փոքրիկ կենդանի պուկ եկավ Սոսիկի ոտների տակից ու փախավ: Երկի խլեղ էր, կամ գորտ: Չալոն ընկավ նրա ետևից, բայց հետքը կորցնելով դժգոհ փնշացրեց ու պոշը խաղացնելով ետ վազեց: Այստեղ-այնտեղ թոշկոտում էին ծտերը և երբեմն Սոսիկին այնքան մոտ ու համարձակ, որ գայթակղեցնում էին, թե Սոսիկին և թե մանավանդ շնիկին:

Սոսիկը մի պահ մոռացավ իր տրտմությունն ու մանր քարեր հավաքելով բռան մեջ, սկսեց վազվազել թոշունների ետևից, քարահարել նրանց: Այնքան տարվեց այդ զբաղմումքով, որ արդեն

լրջորեն մտածել սկսեց թռչնորսովթյան մասին։
Հետո նրա ուշադրությունը գրավեցին թիթեռները։
Վերջապես շատ քայլելուց, ու վազվագելուց բոլորովին հոգնած նստեց մի քարի տակ։ Նստելուն
պետք հիշեց ընկերոջը.

— Ա՞յս, երանի հիմա Բենիկն ինձ հետ լիներ:

Եվ այն է, ցանկանում էր վեր կենալ, որոնումները շարունակել, երբ հանկարծ ուրախությունից ճշաց։ Գետնին ընկած էր Բենիկի հովական մահակը, այդ նրանն էր, Սոսիկը լավ էր ճանաչում։ Մահակը ձեռքին՝ չեր վճռում ինչ անել։ Ետ վազել, իմաց տալ, թե շարունակել փնտռելը։ Երեխայական ինքնասիրությունն ու հպարտությունը ստիպեցին նրան ինքնուրույն գործել։

— Գնա՞նք, Զալո շան, գնանք, Բենիկին կդունե՞նք...

Եվ երեխան ու շունը ճանապարհը շարում ակեցին։ Նրանք քայլում էին ճիշտ այն ճանապարհով, որով գիշերն անցավ Բենիկը ու մոտենում էին այն շարաբաստիկ ձորին, որտեղ թողեցինք մեր սիրելի հերոսին։

Հասնելով ձորաբերանին Սոսիկը կանգնեց:
Չալոն անհանգստացել էր, խլշել էր մազոտ ա-
կանջները և քիթն օդի մեջ խրած՝ հոտոտում:
Ապա սկսեց հաջել ու իրեն քարի պես նետեց ձո-
րը: Սոսիկը հետևեց նրան, բայց որովհետև չը
հասնում, անդադար կանչում էր.

— Չալո՞ , կամաց, Չալո՞... Չալո՞...

Քարերը ոտքերի տակից սահում էին, սայ-
թաքում էր, մեկ-մեկ վայր ընկնում, փշենիները
շանգոռում, արնոտում էին նրա մերկ սրումքները,
ուայց այս ամենին անուշադիր Սոսիկը շարումա-
ռում էր վազել, աշխատելով Չալոյին չկորցնել:

Վերջապես հասավ Գյաղբելը կանաչ գոտու
նման բոլորող անտառին: Չալոն մի պահ կանգ
առավ, սկսեց կատաղի հաջել ու մտավ անտառ:
Սոսիկը կռացավ, ապահովության համար վերց-
րեց երկու քար ու նույնպես անտառ մտավ: Ամեն
ինչ խավարեց: Երկինքը ծածկվեց: Ասես կախար-
դական հարվածով գիշեր իջավ: Չալոն կորավ
ծառերի մեջ, միայն լսվում էր հաջոցը: Սոսիկը
քայլում էր ձայնի կողմը: Ահ, սարսափ մոռացել
էր, քարերը նրան սրտապնդում էին, թեև հենց
այդ պահին շատ ափսոսաց, որ իր հետ չվերց-

բեց շամփուր-թուրը։ Անտառում կողմնորոշվելո
շատ դժվարացավ, մանավանդ հանկարծ Զալոյի
ձայնը բոլորովին կտրվեց։ Ուզնց շանը կանչել,
հետո մտածեց, որ այդ վտանգավոր է, լավ է
սուս ու փուա... տիրեց անտառային խորհրդավոր
լոռվթյունը, ուր թվում էր, թե ամեն մի ծառ,
ամեն մի թուփ ու քար, շնչում էին, կարող էին
շարժվել, հարձակվել։

Նորից շատ մոտիկից լսվեց Զալոյի հաջը։
Սոսիկն զգաստացավ ու քարերը բուան մեջ սեղ-
մեց։ Իսկ այնուհետև ամեն ինչ կատարվեց այն-
պես արագ ու անսպասելի, որ Սոսիկը ոչ քարե¹²
րըն օդտագործեց, ոչ էլ որևէ ձայն կարողացա-
հանել։

Ծառերի միջից դուրս թռավ Զալոն, իսկ նրա
ետևից այն անծանոթը։ Ամբողջովին զինված
էր։ Ուսից կախված էր ավտոմատը. կուրծքը
ծածկված էր խաշածեւ կապված փամփուշտակալ-
ներով. ձախ ու աջ կողքին ատրճանակներ, ձեռ-
քին էլ ֆիննական դանակ... գլխին մի ճապաղ
փափախ ուներ, ոտներին դիմացկում սապոզներ։
Երիտասարդ էր, թեև թուխ մորուքն ու բեխերը,

այրված դեմքը նրան նմանեցնում էին քառասով
տարեկան մարդու:

Կատաղած Զալոն փորձեց կծել անծանոթին,
բայց սա այնպես դիպուկ աքացի տվեց նրան,
որ շունը կողկոնձալով և կիսահաջ ետ վազելով
դեպի Սոսիկը, չարությամբ շարունակեց նայել
անծանոթ մարդուն:

Սա տեսնելով, որ դիմացի կանգնածը երեխա
է, դանակը պահեց գրպանում, ապա բամբ
ու կոպիտ ձայնով ասաց.

— Հը՛, թուշ'... ո՞ւմ ես ման գալիս...

Սոսիկը համր էր կտրել: Նա ոտից-գլուխ
քննում էր անտառաբնակին և չգիտեր, թե ինչ
ասեր:

— Հը՛, խոսալդ չի գալի՞ս... նորից հարցրեց
նա, հոնքերը մոտեցնելով և չար հայացք նետե-
լով երեխայի վրա:

Սոսիկը նորից շպատասխանեց: Ոչ թե չէր
ուզում, այլ պարզապես լեզուն չէր հնազանդ-
վում: Անծանոթի դեմքը կարծես թե նրան ծանոթ
թվաց, թեև այդ պահին ոչ մի կերպ չկարողա-
ցավ որոշել նրա ով լինելը:

— Գիտեմ ում համար ես եկել, — շարունակեց զինվածը. — արի'...

Սոսիկի լեզուն շարժվեց: Բենիկին տեսնելու միտքը նրան սթափեցրեց.

— Բենիկի՞ն... — հարցրեց:

— Բենիկին... Համա շվախենաս, թուլա... — քմծիծաղ տվեց ավագակը (այդպես սկսեց նրա մասին մտածել Սոսիկը):

Սոսիկը հարցական նայեց:

— Նրա կաշին քերթել եմ, քոնն էլ կքերթեմ, իմացա՞ր: Կարա՞ս, փախիր... փախիր էլի, ի՞նչ ես քար կտրել: Գնա յայլային իմաց տուր, որ ինձ տեսել ես, որ գան ինձ բռնեն... Հո՛, Հո՛, Հո՛... — անբնական կերպով ծիծաղեց անտառաբնակը: Դե, արի', արի', որ չես փախչում, մեղքն իմը չի:

Ավագակը մոտեցավ և իր մեծ թաթով բռնեց Սոսիկի օձիքից: Չալոն նորից կատաղելով հարձակվեց և քիչ էր մնում ավագակին կծեր:

— Ես քո դատաստանը հիմի կտեսնեմ, — ասաց ավագակն ու ֆիննական դաշունը հանելըն ու ճարպիկ կերպով շան վրա նետելը մեկ եղավ: Դաշունը խրվեց ջալոյի կողերի մեջ: Սո-

սիկը ճշաց ու մոտ վազեց արյան մեջ կորած շանը։ Սա սաստիկ տանջվում էր, երևի անասելի ցավերից։ Իսկ ավազակը հոհոռում էր։

— Կարա՞ս ձեն հանես, — դիմեց նա Սոսիկին, — քեզ էլ նրա օրը կցցեմ։ Ապա մոտենալով շանը, անտարբերությամբ դուրս քաշեց դաշունը, սրբեց շինելի փեշով ու մտցրեց կաշվեպատյանի մեջ։ Չալոն անկենդանացել էր։

— Վաշ, Չալո՛ շան... — մի քանի անգամ շշնչաց Սոսիկը, թևքով սրբելով արցունքները։

— Սա էն դանակն է, որ ձեր ոչխարների գլուխը թոցնում է... — ավելացրեց ավազակը, ինչ որ հատուկ բավականությամբ, յ հետո Սոսիկին քաշեց, — գնանք... քու բանը պոծած է։

Սոսիկը կընդիմանար, եթե նրան թենիկին տեսնելու հույսը շտիպեր ենթարկվել։ Ավազակը քաշում էր նրա ձեռքից, իսկ նա գլուխը ետ ծուած նայում էր անձնազոհ, խեղճ շանը։ Սոսիկն ուզում էր բարձրածայն լալ, բայց զսպում էր իրեն, չէր ցանկանում մատնել երեխայությունը, ուզում էր համարձակ երևալ։

— Արի՛, արի՛... անընդհատ կրկնում էր ավազակն, ու քաշում Սոսիկի ձեռքից — թուլա՛...

— Կարգին խոսա; — բողոքեց Սոսիկը:

— Պահո, նեղացավ, ներողություն գեներալ... ինչի՞ ես նեղանում, հրեն էն թուշեն քու ախպերը չէ՞ր, որ քիչ մնաց լաց լինեիր... Դե՛, դե՛, դե՛, — խստանալով ավելացրեց անտառաբնակը, — էլ Ասեմ, ... քու թենիկն էլ շատ երպատովում, համա կաշին քերթեցի...

— Մեռել է՞... — սրտապատառ կտրեց նրա խոսքը Սոսիկը:

— Հո՛, հո՛, հո՛... Կտեսնես...

Ու մտան անտառի խորքը: Սոսիկին թվաց, թե ինքը հավիտենապես կտրվեց աշխարհից, որ էլ ոչ երկինք կտեսնի, ոչ արև, ոչ մորը, ոչ փառահեղ Գյազբելը, ոչ էլ այնքան հարազատ յայլան: Ամեն ինչ կորավ:

Երկար շքայլեցին:

Այնտեղ, որտեղ խիտ դասավորված, հաստաբուն և նկուն ծառերն իրար էին խճճված ու նրանց սաղարթները մի բնական ծածկ էին ստեղծել, կանգ առան: Ըստ երկույթին դա էր ավազակի «տոմը»:

Սոսիկն աշքերով փնտռում էր թենիկին: Փնտռում էր ու վախենում, թե ականատես կլինի

մի սարսափելի բանի: Բայց, բանից նընաց, որ
ավազակը պարզապես խաղացել է երեխայի
հոգու հետ:

Ծառերի տակը, կապկպված վիճակում ըն-
կած էր թենիկը: Նա իր խավար անկյունից առա-
շինը տեսավ Սոսիկին ու կցկտուր ձայնով կան-
չեց.

— Սոսիկ...

Սոսիկը նետվեց դեպի նա: Եվ որովհետև
ընկերոջ ձեռքն ու ոտը կապված էին, և նա սկսեց
նրան համբուրել և արագ քանդել պարանի հան-
գույցները:

— Ի՞նչ ես անում, թուշ...— ոտով ծանր
հարված իշեցնելով Սոսիկի մեջքին գոռաց ավա-
զակը:

Սոսիկը ցավից ճշաց: Նա այժմ հասկացավ,
որ երկու ընկերով ընկել են մի թակարդի մեջ:

8. ԱՆՁԱՆՈԹԸ ՏՄՆՍԶՎԵՅ

Վրա հասավ երեկոն:

Անտառի խորքում այդ բանն առանձնապես
նկատելի չեղավ, միայն ծառերը կորցրին իրենց

մուտ կանաչ գույնը, ծովզեցին իրար ու դարձան
խավարին մերված սև զանգվածներ:

Սոսիկն ու Բենիկը կապկպված ընկած էին
իրարից մի քանի քայլ հեռու: Նրանք իրար հետ
միայն կցկտուր բառեր էին փոխանակում, ավա-
զակը նրանցից չէր հեռանում: Ծալապատիկ նրա-
տած իր «անկողնուն», որը կազմված էր խոտից
և ինչ որ կեղտուտ լաթից, մաքրում էր ավտոմա-
տը, ատրճանակներն ու քթի տակ ինչ որ երգ
մումուռմ: Աշքի տակով էլ նայում էր փոքրիկ
կապյալներին: Սրանք հետաքրքրությամբ հե-
տևում էին անծանոթի գործողություններին: Նը-
րանց պակաս շափով չէին հետաքրքրում զենքե-
րը, մանավանդ մասնատված վիճակում: Մի
պահ մոռանալով իրենց վիճակը, Սոսիկն ու Բե-
նիկը սկսեցին խոսել զենքերի մասին և տալ
նրանց անունները: Վերջապես Սոսիկը դարձավ
անծանոթին,

— Քեզ էդքանը որտեղի՞ց... }

Ավազակը նայեց նրան, ապա առանց պա-
տասխանելու, արդեն հավաքած ավտոմատի փո-
ղըն ուղղելով Սոսիկի վրա, ձախ աշքը կկոցեց,
իբր թե ուղում է կրակել:

— Սոսիկ, կրակում է, — աղաղակեց թինիկը
և սկսեց գլորվել ընկերոջ կողմը։ Ավագակը ծի-
ծաղեց և փողը շարժել սկսեց մեկից-մյուսի
վրա։

— Մե՛կ... երկո՛ւ... երե՛ք... ծոր տալով հաշ-
վեց նա, ու շնիկը քաշեց։ Կրակոց չեղավ, հրա-
ցանում գնդակ չկար, ուղղակի տանջում էր երե-
խաներին։

— Լա՛վ, լա՛վ, չեմ կրակի, խելո՛ք եք... հա-
մա որ ձեզ կարգին չեք պահել, է՛, ձեր բանը
պրծած է։ Սանթրոսից ազատում չունեք։

Ավագակն զգաց, որ իրեն մատնեց, բայց
արդեն ուշ էր։ Երեխաները նրան ճանաշեցին։

Սանթրոսն իրենց գյուղացի էր, մի լոդր կոլ-
խոզնիկ, Մելիքի տղան, Բախչիի եղբոր որդին։
Այս նա ասում էին ֆրոնտ էր գնացել, ի՞նչ գործ
ուներ այստեղ, ի՞նչ էր ուզում։ Հայտնի էր մի-
այն, որ նրանից վաղուց՝ տեղեկություն չկար։

— Բա դու մեզ չե՞ս ճանաշում, — շարունա-
կեց թենիկը, — մի գեղացի չե՞նք. ինչի՞ ես մեզ
կապել։

— Շատ լավ եմ ճանաշում երկուսիդ էլ...
Դուք էլ ինձ եք ճանաշում... Դրա համար էլ կա-

պել եմ... Ոտներդարձակ լինի, հանկարծ կփախուշեք, մեղք եք, գյուլլախորով կանեմ,— հանգիստ պատասխանեց Սանթրոսը և զենքերն սկսեց հավաքել:

— Սանթրոս քնոի, բաց թող տուն գնանք, — խնդրեց Սոսիկը:

— Քիչ խոսեք, — զայրացած աղաղակեց Սանթրոսը:

— Բա դու չե՞ս ուզում տուն գալ... Ինչի՞ն անտառը մտել... Բախշի ամին հրեն յայլայում է... — ասաց Բենիկը:

Սանթրոսի դեմքը ցնցվեց: Հուզմունքը ծածկելու համար գետնից մի քար վերցրեց ու շպըրտեց երեխաների վրա: Սրանք կուշ եկան ու լոեցին:

Այսպես մնացին մինչև երեկո: Երեկոյան Սանթրոսը կրակ վառեց ու սկսեց ոչխարի մսից ընթրիք պատրաստել: Վտանգից զերծ մնալու համար, քարերի անհավասար կը-տորներից վառարան էր պատրաստել, որ կրակի բոցը երկինք շրարձրանա: Նա միսը խոշոր կտորներով գցում էր կրակի մեջ ու խորովում:

Սոսիկն ու Բենիկը քաղցած էին: Խորովվող

մսի հոտը գոգոնց նրանց ախորժակը և նրանք
արագ-արագ թուք էին կու տալիս:

— Զեզ էլ բաժին կհանեմ, ես նամարդ
չեմ... ինչքան որ չկինի, ձեր ոշխարն է: Ափառ
հաց շունեմ... քանի՛ ժամանակ է հացի երես
չեմ տեսել...—ասում էր Սանթրոսն ու մատներն
այրելով, կրակի միջից դուրս գցում յուղի մեջ
ճպճպացող մսի կտորները: Երբ ընթրիքը պատ-
րաստ էր, մոտեցավ երեխաներին և ապահով
լինելով, որ սրանք որքան էլ ցանկանան խավար
անտառից փախչել չեն կարող, քանդեց կապերը
և նրանց մի-մի կտոր միս շպրտելով, ինքն էլ
նստեց ու գիշատիչ կենդանու նման կրծել սկսեց
մի ահագին ոսկոռ:

Ընթրիքը տեսեց մի քանի ըոպե: Եվ մինչ Սո-
սիկի ու Բենիկի գլուխներում հղանում էր փախ-
չելու միտքը, Սանթրոսը Բենիկին նորից կապ-
կապեց, իսկ Սոսիկին ասաց հետևյալը.

— Տես ինչ եմ ասում, քանի ես էստեղ եմ,
անտառում, դուք էլ ինձ հետ ապրելով եք... Մե-
նակ մարդու համար շատ տխուր է. էստեղ իրար
կօգնենք ու կապրենք: Դուք ձեր գեղից, կոլխոզից
ձեռք քաշեք...

Վառարանի աղոտ լույսի տակ Սանթրոսը
նկատեց, թե ինչպես երեխաներն անհանգստա-
ցան:

— Հիմի ձեզնից է կախված, թե որ ուզում
եք ձեզ հետ լավ լինեմ, խելոք կացեք, հաշտվեք
ձեր վիճակին... թե չէ էստեղ ձեր վերջն է, Չա-
լոյի օրը կընկնեք:

Սանթրոսը նորից լոեց: Ահավոր լոռովիան
մեջ, մոտիկից լսվում էր ինչ որ անորոշ ձայն,
որ կրկնվում էր խորհրդավոր միալարությամբ:
Երկի անտառային որևէ կենդանի էր ձայն տա-
լիս:

— Հա, ինչ էի ուզում ասել... Ես էլ գործ
անող չեմ, դուք կաշխատեք, ես կուտեմ: Ինձ
հաց է հարկավոր, գինի, աղ... Ոչխարն էլ իր
հերթին: Առավոտը Սոսիկ (էլ թուլա չեմ ասի)՝
ճանապարհ կընկնես յայլա... (Սոսիկի սիրու
բաբախեց) ձերոնց կասես անտառ ընկար, ճա-
նապարհը կորցրիր, ուշացար... մի երկու-երեք
օրվա հաց, պաշար կգողանաս, կբերես: Ճանա-
պարհը, որ սովորես, մյուս անգամ գիշերով
կգնաս, որ մարդ շտեսնի: Ոչխարի որ գնանք,

քեզ էլ հետո կտանեմ... Մենակ՝ մարդու շունչ է կտրվում...

Սոսիկն աշխատում էր թաքցնել ուրախությունը: Նրան թվում էր, թե Սանթրոսը հիմար է. չէ՞ որ բավական է դուրս գա անտառից, հասնի յայլա, բոլորին իմաց կտա, կգան, կշրջապատեն ավագակին ու կբռնեն: Նա չգիտեր որ Սանթրոս «քեռին» յամեն ինչ հաշվի էր առել:

— Համա թե որ գնաս ու ետ չգաս,— կարծես թե Սոսիկի մտքերին պատասխանեց Սանթրոսը,— Բենիկին էլ չե՛ս տեսնի... Մի օր, որ ուշացար, է՛, կամ չեկարձ տեղն ու տեղը կսատկացնեմ... Հիմի դու գիտես...

Սոսիկի հույսը բոլորովին կորավ: Նոր հասկացավ, որ Բենիկի կյանքը կախված է իրենից, չէր կասկածում, որ ավագակն (իր սպառնալիքը կիրագործեր) :

— Համաձայն ես,— հարցրեց Սանթրոսը:

Սոսիկն անմիջապես չպատասխանեց: Ասելիքը չէր որոշել: Եթե համաձայնվեր, և կատարեր Սանթրոսի պատվերը, նշանակում է դառնում էր ընկերակից, եթե համաձայնվեր, բայց չկատարեր Սանթրոսի պատվերը, նշանակում է

պատճառ կդառնար Բենիկի մահվան։ Ավելի լավ
էր տեղից շարժվել, մնալ ընկերոջ հետ, ինչ պա-
տահելու էր, թող երկուսի հետ պատահեր։

— Հը'...ձե՛ն հանի...—հարցապնդեց Սանթ-
րոսը։

— Զէ'...

— Ի՞նչ ոչէ՞...

— Զե՛մ գնա...

— Զե՛ս գնա...

— Հա՛, չե՛մ գնա...

— Լա՛վ... Ուրեմն ես մեղավոր չեմ։ Մինչև
լուսաբաց քեզ ժամանակ, լավ մտածիր... Դանա-
կըն էլ հիմի սրում եմ, որ առավոտը վզներդ կըտ-
րեմ...— ասաց, Սոսիկին նույնպես կապկպեց,
ինքը քաշվեց մի կողմ ու երկար ժամանակ,
մթության մեջ երեխաները լսում էին դանակ
սրելու սարսուռ ազդող ձայնը։

Հետո տիրեց խորը, մեռելային լուսթյուն,
ըստ երևութին Սանթրոսը քուն մտավ։ Իսկ երե-
խաների աշքին քուն չէր գալիս։

Սոսիկը մտածում էր.

— Ի՞նչ անեմ, որ լույսը բացվի, գնա՞մ, թե
չգնամ։

ԲԵՆԻԿԸ ՄՏԱԾՈՒՄ ԷՐ.

— Ի՞նչպես իմաց տամ Սոսիկին, որ համաձայնվի, իմ մասին շմտածի, որ յալլային իմաց տա՝ գան էս վնասակար մարդու հախիցը գան:

Սոսիկը մտածում էր.

— Գնամ, տե՛ղ հասնեմ ու խաբե՞մ, ճշմարտությունը շասե՞մ, ու էդ հերիք չէ, գողովթյո՞ւն անեմ... բա հերս որ իմանար ի՞նչ կասեր. չէ՞ր ասի, բալա ջան, ես արյուն եմ թափում, որ դու էդտեղ գողերին ու ավազակներին հաց տաս, պահես, պահպանե՞ս...

ԲԵՆԻԿԸ ՄՏԱԾՈՒՄ ԷՐ.

— Իմ ազիզ ախալերը, որ լիներ, ի՞նչ կաներ... Արտոն կասեր—թող ինձ սպանի էս գարշելին, մենակ թե ընկերն իմացնի գյուղացոց, որ գան, անտառը շրջապատեն ու էս ավազակին բռնեն:

Այսպես առանձին-առանձին երկու ընկերներն իրենց մտքերի մեջ էին: Խավարի մեջ իրար չէին տեսնում, խոսել չէին համարձակվում, մոտենալն էլ կապկպված վիճակով խիստ դժվար էր: Այնուամենայնիվ ԲԵՆԻԿԸ փորձ արեց: Գլխով հենվելով գետնին, կատվի նման մեջքը բարձ-

րացրեց և այդպես պտույտ եկավ։ Ուղղությունը
որոշելու համար գրեթե անլսելի տվեց ընկերոջ
անունը։ Սոսիկն անմիջապես որսաց ընկերոջ
կանչը և պատասխանեց.

— Էստե՞ղ եմ...

— Թե կարող ես գլորվի իմ կողմը...—ասաց
Բենիկը և մի պտույտ էլ գործեց։

Սոսիկն ավելի դժվարությամբ, քան թե Բե-
նիկը կատարեց երկու պտույտ և զգաց ընկերոջ
անհանգիստ շնչառությունը։

— Սոսիկ...

— Բենիկ...

Սանթրոսի պառկած կողմից ինչ որ ձայն
լսեցին։ Շնչները պահեցին, որևէ կերպ իրենց
շմատնելու համար։ Հետո նորից խաղաղություն
տիրեց։ Երևի ավագակը շուր էր եկել և անկող-
նու խոտի ճզմվելու ձայնն էր։

— Առավոտը գնա՛,— շշնչաց Բենիկը։

— Չե՛մ գնա՛...— պատասխանեց Սոսիկը։

— Գնա՛, Սոսիկ... իմ մասին մի՛ մտածիր...
Ես կազատվե՛մ... դու գնա՛, իմա՛ց տուր...

Սոսիկն այդ մտքից սարսափեց։ Դանակի
սրելու ձայնը չէր հեռանում նրա ականջի միջից։

— Լավ կլինի՞, որ նրկուաս էլ...— Նորից
խոսեց Բենիկը և գլուխը բոլորովին մոտեցնելով
Սոսիկի գլխին սկսեց գուրգուրվել, — գնա Սոսիկ
շան, գնա, ազնիվ պիոներական խոսք, չեմ վա-
խենում... բա ես իմ ախաղոր ախաղերը չե՞մ... իմ
յարածը նրա արածի առաջ ի՞նչ բան է որ... թե
ինձ սիրում ես ախաղեր շան, Սոսիկ շան...

Սոսիկն արտասվում էր: Նրա արցունքները
թրջում էին և՛ իր, և՛ ընկերոջ այտերը:

— Լա՞ց ես լինում, ամոթ չի՞, — Հուզված
խոսեց Բենիկը, — Հանկարծ որ Սանթրոսը տես-
նի, որ լաց ենք լինում, տեղն ու տեղը մեր վիզը
կկտրի...

— Արի փախչենք, — առաջարկեց Սոսիկը:

— Չենք կարող...

— Ատամներով թոկերը կկոծենք, ձեռք ու
ոտ կազատենք...

— Մինչև որ թոկերը քանդենք, կլուաանա...
Զէ, չի լինի, Սոսիկ շան: Միակ ճարը քու գնալն է:

Սոսիկը լոեց: Գլուխը ծանրացել էր: Այնու
անորոշ դարձավ նրա համար, թե ինչ է անելու:
Բենիկն ընկերոջ լոռվթյունը վերագրելով նրա
համաձայնությանը, վերջին անգամ շշնչաց,

— Սոսիկ...

— Հը...
— Առավո՛տը...

Ու նորից տիրեց խաղաղությունը՝ Երեխաները ծանր տպավորություններից այնպես հոգնել էին, որ մոռանալով իրարից հեռանալ, խորը քուն մտան:

9. ԽԵՂՋ ՃՐԱԳԻՐ

Լուսաբացին երկուան էլ արթնացան աքացու ուժեղ հարվածներից։ Նրանց գլխի վերևը կանգնած էր Սանթրոսը։

— Ուզում եք ձեզ ծառերին կապեմ, որ իրար բոլորովին չմոտենա՞ք, հա՞..., — ասաց նա խիստ սպառնական, ապա դարձավ Սոսիկին, — Հը՛, ոնց որ ասի — գնո՞ւմ ես, թե չէ...
Սոսիկը մի պահ տատանվեց, ապա վերհիշելով թենիկի հետ կայացրած պայմանը, պատասխանեց։

— Լա՛վ...
— Ա՛յ ապրես... — և Սանթրոսն արագ արձակեց Սոսիկի կապերը։ Մինչև վաղն առավոտ էկար-էկար, չէկար՝ թենիկին քերթում եմ, հասկացա՞ր..., — ստուգող հայացքով վերջին անգամ նախազգուշացրեց ավազակը։ Սակայն Սոսիկը

զարմանալի ինքնազսպվածությամբ իր մտքերը
շմատնեց: Բենիկը, որ ահ ու դողով հետևում էր
Սոսիկի ամեն շարժմանը, հանգիստ շոնչ քաշեց:
Վտանգն անցավ:

Քիչ հետո Սոսիկը ճանապարհ ընկավ: Գնում
էր, բայց թվում էր նրան, թե սիրու մնաց այն-
տեղ, Բենիկի մոտ...» Թվում էր, թե ինքն այլևս
չի տեսնի սիրելի ընկերոջը: Մի պահ այդ միտքն
այնպես ճնշեց նրան, որ կանգ առավ, ուզեց ետ
դառնալ, դառն վիճակը ընկերոջ հետ բաժանելու:
Բայց Բենիկի խորհուրդը նորից սթափեցրեց նը-
րան,

— Զէ՛, պիտի գնամ, իմաց տամ:

Իշարկե, այժմ այդ է կարևորը: Յայլան վր-
տանգի տակ էր: Բացի անասունները հափշտա-
կելուց, Սանթրոսը կարող էր մարդ սպանել, ու-
րիշ վնասներ հասցնել:

Սակայն ինչո՞ւ էր Սանթրոսն այստեղ,
ինչո՞ւ էր թաքնվել անտառում և այսպիսի վատ
գործերով զբաղվում, մտածում էր Սոսիկը և պա-
տասխան գտնել չէր կարողանում: Նա շտապում
էր, գրեթե վազում: Ռոպե առաջ ուզում էր տեղ
հասնել և ամեն ինչ պատմել...



Իսկ ի՞նչ կատարվեց յայլայում Սոսիկի անհետանալուց հետո: Բարձրացավ մի նոր իրարանցում: Յայլայի բոլոր կանայք գործերը թողած հավաքվեցին Սոսիկի ու Բենիկի մայրերի գլխին, և ով ինչպես կարող էր միսիթարում էր նրանց:

Կոլխոզի նախագահ Սերոբը և Անթառամբ, Բենիկի անհայտանալուց հետո անմիջապես Գյաղբելից հեռացել էին, որ միլիցիային իմացտան:

Գնալիս Սերոբը Վարդագարին նախազգուշացրել էր.

—Տես, թե վտանգավոր է, քոչեցեք, գյուղեկեք...

Վարդագարը շպատասխանեց: Թեև ֆերմանիր պլանները կատարել էր, այնուամենայնիվ դեռշատ օրեր կային սարում մնալու համար, արտավայրերն էլ հակառակի նման այս տարի այնքան հարուստ էին, որ դժվար էր հրաժարվել նրանցից:

Սակայն Սոսիկի անհայտանալուց հետո Վարդագարն այլևս համառել չէր կարող: Որոշ-

վեց բոլոր անասուններին կանանց հետ միասին՝
ուղարկել գյուղ, իսկ տղամարդիկ, թվով տասն-
չորս հոգի, մնան մինչև շրջանից օգնություն գա:

Սկսվեց քոչի աշխատանքը: Տագնապ ու ան-
հանգստություն կար: Շտապում էին: Բոլորին
թվում էր, թե ամեն մի ժամը կարող է բերել մի
նոր անակնկալ:

— Վարդազար ջան, մենք չե՞նք գնա, չե՞նք
գնա... — անվերջ կրկնում էր Հոռոմսիմը, — գե-
ղումը մեր սիրու կճաքի:

Վարդազարը շգիտեր ինչպես համոզեր երկու
մայրերին:

— Զեր էստեղ լինել-շինելը հաշիվ շոմի:
Զար տղերք են, ո՞վ է իմանում անտառ են գնա-
ցել, ճանապարհը կորցրել... Կգտնե՞նք, քեփներդ
քյոք պահեք...

— Չէ՞ , չէ՞...

Սկսեցին համոզել նաև կանայք, թե մնալն
իմաստ շոմի, թե տղամարդկանց կխանգարեն,
թե բան չկա, երեխաներին կգտնեն, գյուղ կբե-
րեն: Վերջը կիսահամոզված խեղճ մայրերն ան-
հնազանդ քայլերով հետեւեցին քոշվորներին:

Սոսիկը վրա հասավ այն ժամանակ, երբ

յայլան ամայացել էր, մնացել էր մի քանի վրան։
Տեսավ, որ իշնում են դեպի գյուղ, ուզեց վազել
նրանց ետևից, բայց վրաններից մեկի առաջ
նկատեց, Բախչիին։ Մոտ վազեց։

— Բախչի՝ ամի՞..

Ծերունին աշքերին շհավատաց։ Եվ այնպես
շփոթվեց, որ ձեռքից ցած գցեց նվիրական շի-
բուխը ու ապշած նայեց երեխային։

— Այ տղա դո՞ւն ես..

— Ես եմ, ես եմ, պապի զան..

Գրկախառնվեցին։

Բախչին սկսեց հարց ու փորձը, սակայն
Սոսիկը նախ և առաջ հարցրեց, թե որտե՞ղ է
ընկեր Վարդաղարը։

— Վարդաղա՞ր... կանչեց Բախչին սարեցու
ուժեղ ձայնով։ Վարդաղարը երևաց։ Տեսնելով
Սոսիկին այնպես ուրախացավ, որ քիչ էր, մնում
վազեր, բոլորին ետ կանչեր, կարծես թե ամբողջ
վտանգը վերացավ։

Սոսիկը լաց եղավ։ Երկար լարվածությունն
ու անհանգստությունը մինչև այժմ զսպել էին
նրա պատանեկան զգացմունքները։ Զէր կարո-
ղանում հանգստանալ, կցկտուր բառեր էր ասում,

և անընդհատ հեկեկում։ Վերջը պատմեց ամեն
բան։ Հարվածն զգաց հատկապես Բախչին։ Իր
եղբոր, Մելիքի որդու այսպիսի հանելուկային
հայտնվելը և նրա ավագակային, թշնամական
վարքը նրան բոլորովին թևաթափ արին։

— Բա ինչպե՞ս եղավ, որ քեզ բաց թողեց, —
հարցրեց Վարդազարը։

— Ասեց կզնաս ինձ համար ուտելիք կը ե-
րես, հաց, աղ... Հետո էլ ասեց, թե որ հետ չե-
կար, Բենիկի կաշին կքերթեմ...

Վարդազարը կրծում, էր շրթումքները, զգում
էր, որ յուրաքանչյուր անզգույշ քայլ կարող էր
վտանգի ենթարկել Բենիկի կյանքը։ Քիչ հետո
տղամարդիկ Սոսիկին շրջապատեցին։ Հարցեր
էին, որ տեղում էին նրա գլխին։ Սոսիկը հազիվ
էր բավարարում բոլորի հարցասիրությունը։ Ապա
սկսվեցին խորհուրդները, թե ինչպես վարվել։
Վարդազարը նստած մի քարի և գլուխն առած
ձեռքերի մեջ լուռ լսում էր, իսկ Բախչի ամին
հեռացել էր։ Նրա սիրտը ճմլվում էր, նա չէր
կարողանում նայել իր համագյուղացիների երե-
սին, եղբոր որդու փոխարեն ինքն էր, ամաշում։
Մտածում էր.

— Յեղով խայտառակ արեց... Թե օրենքով
է ֆրոնտից ազատվել, ինչի՝ մեր աշքին չի երե-
վում, տուն չի գալիս... ուրեմն վախ ունի, որ
կրոնվի... ինչի... ուրեմն փախե՞լ, է... Վա՞յ,
գետի՞ն, պատռվիր ու ինձ ներս առ... Էնտեղ
արյուն են թափում, հայրենիք են պաշտպանում,
նա փախչի... Արտոն իր կյանքը տա, սա, իր
փշացած, անպետք կյա՞նքը պահի... Թե՛ ուրիշ
նպատակ ունի... Զլինի՝ գերմանացիներն են ու-
ղարկել, որ մեզ վնաս տա...

Ու խեղճ ծերունին տարամերժ մտքերից
հանգստությունը կորցրեց։ Իսկ այնտեղ, ժողո-
վատեղում, առաջարկներ եղան, որ սպասել պետք
չէ, հենց հիմա գնան անտառ ու տեղն ու տեղը
Սանթրոսին բռնեն, որ գնան Բենիկին ազատեն,
որ Սոսիկին էլ պետք չէ թողնել ավազակի որ-
շը... Բոլորի, զայրութը մեծ էր, ժամ առաջ ցան-
կանում էին մաքրել իրենց խաղաղ աշխատանքը
խանգարողի հաշիվը։

Իհարկե այս առաջարկություններից ոչ մեկն
իրականացնել չէր կարելի։ Սոսիկը հայտնեց, որ
Սանթրոսը զինված է։ Պարզ է՝ հարմար դիրքից
նա բոլորին կարող էր հնձել։ Զենքին զենքով էր

Հարկավոր պատասխանել, ուրեմն հարկավոր էր սպասել միլիցիային։ Մտքերի փոխանակության ամբողջ ընթացքում Վարդազարը խորհրդածում էր և երբ վերջապես բոլորը լռեցին ու դարձան ֆերմայի վարիչին, թե նա ինչ կարծիք ունի, սա հանգիստ խոսեց։

— Խառնվելու կարիք չկա։ Միևնույն է Սանթրոսը գնալու տեղ չունի։ Մեր առաջին, խընդիրն է Բենիկի կյանքն ազատել…,

— Ճի՛շտ է, ճի՛շտ է, — աղաղակեցին այս ու այն կողմից։

— Դրա համար էլ հարկավոր է, որ Սոսիկը ետ գնա ու Սանթրոսի ուզած մթերքը տանի։

— Ինչպե՞ս, — զարմացած հարցրին այս ու այն կողմից։ Սոսիկն անհանգստացած նայեց Վարդազարին։

— Մեզ հարկավոր է ժամանակ շահել, թե որ նա զինված լիներ, հիմա էլ նրա հախիցը կգայինք, — շարունակեց Վարդազարը, — բայց զինված մարդ է, արժե՞ մի ճիճուկի համար մարդ փշացնել… Զարժե։ Որտեղ որ է միլիցիան մարդիկ կուղարկի, ու էն ժամանակ Սոսիկին էլ, Բենիկին էլ կաղատենք։ Հր, ի՞նչ եք ասում։

Մի պահ լոռություն տիրեց, ապա խոսեց Հովհակը Գասպարը:

— Բա որ մեր, զոշաղ Սոսիկը գնա ու էն ավազակը երկուակն էլ...

— Զէ՛, չէ՛... մեջ ընկավ Սոսիկը, — ինքն ասեց, թե որ խելոք մնաք ու ինձ լսեք, միասին կապրենք, ու ես ձեզ ձեռք չեմ տա...

— Ավազակի խոսքին հավատալ չի լինի:

— Ես անգամ հավատացեք, — ասաց Վարդագարը, — նրա համար օգուտ է, որ երեխաներն իր համար աշխատեն, համ էլ մենակությունից գժված կլինի, մարդու երես է ուզում տեսնել:

— Խելոք ես ասում, Վարդագար, խելոք, — աղաղակեցին հավաքվածները:

— Ուրեմն էսպես էլ որոշեցինք, Սոսիկ շանքեզ հաց էլ կտանք, աղ էլ, պանիր էլ... Կասես գողացել ես: Քեզ շմատնես հա՞... ինչ որ ասի — կլսեք: Քաջ եղեք, էսօր-վաղն օգնության կգանք:

Այսպես խրատեց ու խրախուսեց Վարդագարը:

Սոսիկի համար ծանր էր վերադառնալը, բայց երբ մտածում էր, որ դրանով օգուտ է տալու, ամեն դժվարություն մոռանում էր:

Իրիկնաղեմին մթերքով լի պարկը մեջքին
գցած, Սոսիկը նորից ուղղվեց անտառ։ Նա այժմ
հպարտ էր, որ մասնակցում էր Վարդապարի ա-
ռաջարկած ծրագրի իրականացմանը։ Այդ, մտքով
այնպես ոգևորվեց, որ նույնիսկ սկսեց շվշաց-
նել։ Երևակայում էր այն օրը, երբ սրիկա Սանթ-
րոսը զինաթափ կարվի ու գլուխը կախ, շրջա-
պատված միլիցիոներներով կտարվի արդար պա-
տիժն ստանալու համար։

Հանկարծ Սոսիկը մտահոգվեց այն հարցով,
թե ի՞նչ ձևով պետք է իրականացվի Սանթրոսի
զինաթափումն ու ձերբակալությունը։ Ավագակը
հեշտությամբ շի հանձնվի, կդիմադրի, նշանա-
կում է կկրակի, մարդ կսպանի... Սոսիկը քայ-
լերն արագացրեց, սկսեց վազել, կարծես շտա-
պում էր այդ մեծ վտանգի առաջն առնելու։ Մի՞-
թե ինքն ու Բենիկը, ոչինչ չեն կարող անել, որ
արյուն չթափվի, որ սրիկան ավելի հեշտությամբ
թակարդն ընկնի։ Որքան այդ ուղղությամբ միտ-
քը լարեց, անկարող եղավ իր ուղեղի հնարավո-
րություններից ավելի զորեղ բան մտածել և ելք
գտնել։

Օրը գրեթե մթնել էր, երբ տեղ հասավ։

Ամեն ինչ նույնն էր, ինչպես թողել էր: Բե-
նիկը կապկապված ընկած էր գետնին, իսկ Սանթ-
րոսը պառկած էր: Տեսնելով Սոսիկին, զարմա-
ցավ.

— Էսքան շուտ, — հարցրեց նա:

— Հա, Սանթրոս քեռի, — ուրախ պատաս-
խանեց Սոսիկը և առանց նայելու Բենիկի կող-
մը, որ հանկարծ իրեն շմատնի, ուսից իշեցրեց
պարկը և դրեց ավագակի առաջ:

— Բերեցի՞ր...

— Բերեցի...

— Այ ապրես, զորանա՞ս... խելոք տղա ես
եղել, — աշքերը փայլեցնելով ասաց Սանթրոսն ու
քիթը մտցրեց պարկի մեջ, ստուգելու համար, թե
ինչ է բերել երեխան:

Հենց այդ պահին Սոսիկը հնար գտավ նա-
յելու ընկերոջ կողմը, որը լարված նրան էր հե-
տևում: Սոսիկը գլխով արեց, ուզեց հասկացնել,
թե ամեն ինչ կարգին, է, Բենիկը ժպտաց:

— Հա՛..., բա օրը ցերեկով ո՞նց գողացար,
ո՞նց եկար, մարդ շտեսա՞վ, հարցնող շե-
ղա՞վ... — Կասկածելով հարցրեց Սանթրոսը:

Սոսիկը, որ Վարդազարի կողմից այդ հարցի

Համար նախապատրաստված էր, անմիջապես
պատասխանեց.

— Ախոր յայլայում մարդ չի մնացել, վա-
խից քոշել-գնացել են...

— Յա՞,— զարմացավ Սանթրոսը, — ոչխար-
մոշխար տարե՞լ են:

— Ամեն ինչ տարել են, մնացել են մի քա-
նի տղամարդ:

— Տղամարդիկ ինչի՞ են մնացել:

— Որ վրանները, ինչ կա-շկա հավաքեն ու
իրենք էլ գեղ իշնեն:

Սանթրոսը մռայլվեց, նրան դուր չեկավ այս
նորությունը: Ոչ թե այն բանի համար, որ վտանդ
էր տեսնում, այլ որ ժամանակից շուտ զրկվում
էր սնունդ հեշտ ձեռք բերելու հնարավորությու-
նից: Մի պահ լուր մնալուց հետո հարցերը շա-
րունակեց...

— Բա քեզ չհարցրի՞ն, թե ո՞ւր էիր...

— Էնպես ասի ոնց որ ասել էիր:

— Ո՞նց...

— Թե անտառ ընկա ու ճանապարհը կորց-
րի:

— Բա Զալոյի մասին չհարցրի՞ն...

- Այթեղ Սոսիկը մի պահ կապ ընկավ, չի-
 մացավ ինչ պատասխանի:
 — Հը...
 — Ասի՝ կորավ...
 — Բա շոմը կկորչի... նրանք էլ հավա-
 տացի՞ն...
 — Բախշի ամին չհավատաց...
 — Բախշի ամի՞ն... անհանգստացավ Սանթ-
 րոսը, — ի՞նչ ասեց:
 — Ասեց՝ կորած չի լինի, յա գեղ ա գնացել,
 յա որտեղ որ ա կերևա...
 — Ուրիշ բան չասե՞ց, քեզ հարց ու փորձ
 չարե՞ց...
 — Զէ՛...
 — Բենիկի մասին չհարցրի՞ն... Զխոսեցի՞ն:
 — Հույսերը կորցրել են.. ասում են, թե
 գելերն են փախցրել:
 — Ճի՞շտ ես ասում, այ թուլա... քննող
 հայացքը Սոսիկին հառած հարցապնդեց Սանթ-
 րոսը:
 Սոսիկը մեծ ճիգ թափելով դիմացավ այդ
 հարցին ու պատասխանեց.
 — Բա սո՞ւտ ե՞մ ասում: Համ էլ Սանթրոս

քեռի, դու խոսք տվիր, որ մեզ էլ թուշա չես
ասի՞:

— Լավ, լավ, խոսք էր, բերնից թուավ...
Որ էս ուտելիքը բերել ես արժանի ես, որ թու-
լա չասեմ:

— Սանթրոս քեռի, — աղաղակեց Սոսիկը, —
ի՞նչ կլինի, որ թենիկի կապերը քանդես, մեղք
է:

— Հա՞... մե՞ղք է... դու կարծում ես քեզ
ազատել եմ, նրա համար ե՞ս խնդրում: Զէ',
չէ'... — մոլտաց Սանթրոսը, — համա զիջում կա-
նեմ, մենակ ձեռքերդ կկապեմ:

Այդպես էլ արեց: Ազատեց թենիկին և մեկ
թոկով երկուահ ձեռքերը կապելով ասաց.

— Էսպես լավ է, իրարից անբաժան կլինեք:

Մի կես մետրի չափի թոկ էր բաժանում Սո-
սիկին ու թենիկին: Նրանք նստում, վեր էին կե-
նում միասին, քայլում էին միասին, վատ էր,
բայց ավելի հարմար, քան նախկին՝ վիճակը:

Երբ բոլորովին մթնեց, Սանթրոսն ազատեց
երեխաներին՝ և կարգադրեց ցախ կրել ու կրակ
վառել: Իսկ ինքն սկսեց ոշխարի մնացորդները
կտրտել ընթրիքի համար: Նա խիստ մտահոգ-

ված էր. առաջին անգամ սկսեց Մտածել ապա-
գայի մասին, ի՞նչ է լինելու իր վիճակը, ո՞ւ
հովանավորությանը դիմի: Զմեռը վրա կհասնի,
անտառում ապրելը կդառնա անհնար, ստիպված
սարից իշնելու է... Հետո... Խորթ էր այժմ նրա
համար իր ծննդավայրը, գյուղացիք, նույնիսկ
հարազատները: Նրանք բոլորը պատրաստ են
իրեն հանձնելու իշխանությանը, եթե իմանան,
թե ինչպես է ընկել այստեղ: Այդ բոլորը Սանթ-
րոսը գիտակցում էր և ավելի ու ավելի էին ծան-
րանում մտորումները: Կանգնած էր անհայտու-
թյան առաջ Սանթրոսն այնպես էր խորասուզ-
վել, որ կորցրել էր իր զգոնությունը: Օգտվելով
առիթից Սոսիկն ու Բենիկը իրար հետ բացա-
տրվեցին: Երբ Բենիկի համար ամեն ինչ պարզ
եղավ, կրակի համար չոր ճյուղեր դասավորելով,
Սոսիկի ականջին շնչաց.

— Էնպես ենք անելու, որ մարդու վնաս
չտա:

— Հա՛, հա՛, ես էլ եմ ասում,— վրա բե-
րեց Սոսիկը:

— Մտածենք...

— Շատ մտածեցի, հնար չգտա:

— Գիշերը... — կարճ առաց թենիկը և կրակը թեժացնելու համար սկսեց փշել:

Երեխաների սիրտն այնպես անհանգիստ էր բարախում, որ թվում էր, թե հիմա շնչառպառ կլինեն: Նրանք չգիտեին, թե ինչ և ինչպես են անելու, սակայն թեկուզ հենց իրենց գործի անորոշ հեռանկարը նրանց սաստիկ անհանգստացնում էր, հուզում:

Կրակը պատրաստ էր: Ճյուղերն այնքան շատ էին և կրակը թեժ, որ բոցը վառարանի զանազան անցքերից դուրս էր պրծնում, որպես ահոելի վիշապի հրեղեն լեզուներ: Սանթրոսին այդ դուրս չեկավ: Նրան այժմ ամեն ինչ վախեցնում և տագնապ էր պատճառում: Երեկի ավագակը զգում էր իր մոտալուս վախճանը:

Ընթրիքի ընթացքում Սանթրոսի ականջին ինչ որ ձայներ հասան: Նա անմիջապես վեր թրռավ, ավտոմատն առաջ պարզած գնաց ստուգելու:

Թենիկն անմիջապես խոսեց.

— Սոսիկ ջան, չե՞նք կարող զենքերը պահել:

— Ի՞նչպես...

Սանթրոսը վերադարձավ։ Անտառի սովորական ձայներն էին, որ այսօր ավազակին արտասովոր թվացին և աղետաբեր։ Նստեց, բայց այլևս ընթրել չկարողացավ։ Վառարանի արդեն հանգչող կրակի կարմիր լուսի տակ երեխաները տեսան նրա կնճռոտված, մուայլ դեմքը։ Կարծես թե իրենց առաջ նստած էր մի մարդագել, գազան, նրանց նույնիսկ թվաց, որ ժանիքներ ունի, որոնք դուրս են եկել շրթունքների միջից և նրանցից արյուն է կաթում։

Սանթրոսն աշքերը փակել, ծանր շնչում էր։ Իսկ Սոսիկն ու Բենիկը լուռ հետևում էին նրան։ Զէին որոշում քնած է, թե ձեւացնում է։ Բայց երբ նրա թուլացած գլուխը մի երկու անգամ կախ ընկավ, պարզվեց, որ ննջում է։ Սանթրոսն աշքերը բաց արավ, ձեռքերը ետ տանելով ու մեջքը կոտրատելով լայնաբերան հորանջեց, ապա հրամայեց։

— Դե, ի՞նչ եք ցցվել, շնթռկեք...

Ու նրանց այլևս չկապեց։ Երեխաները գլխի շընկան, որ խորամանկ Սանթրոսը կրկին անգամ փորձում էր։

Թագավորեց անտառային մոռայլ ու ահավոր
լոռությունը։ Տիրող խաղաղության մեջ ամեն մի
չնշին ձայն, շրջուն երեխաների ականջում հըն-
շում էր հազարապատիկ ուժգին ու զորեղ, կար-
ծես ամբողջ անտառում տեղաշարժեր էին կա-
տարվում։ Միջավայրը տրամադրում էր, որ Սո-
սիկն ու Բենիկը վերհիշեին Բախչի ամու առաս-
պելները, հեքիաթները Գյաղբելի մասին։ Նրանց
երևակայությունը բոցավառվեց. ահա իրենց կող-
քով թոշկոտելով անցավ այծոտն անտառային
ոգին, պողերով ու սրակզակ, սրինգը բերանին,
մի սարսափելի ժպիտ դեմքին, կամ ահա այն
ծառից կախված է փայտահատ Մոսեսը, որն իր
սալլով եկել էր փայտ տանելու և այլևս չէր վե-
րադարձել...

Ու շատ-շատ բան անցավ երեխաների մըտ-
քով, նրանք կուշ էին եկել և ընկել ինքնամոռա-
ցության մեջ։

Հանկարծ լսեցին Սանթրոսի խոմփոցն ու
սթափվեցին։

10. ՍՊԱՌՆԱՒՔԻ ՏԱԿ

Հարկավոր էր որևէ բան վճռել:

— Արի փախչենք, — առաջարկեց Սոսիկը, — ես արդեն ճանապարհը ճանաշում եմ, տեղ կը-հասնենք:

— Ի՞նչ ես ասում, Սոսիկ, — շշնչաց թենիկը, — ո՞նց փախչենք: Սանթրոսը գլխի կընկնի, էստեղից կհեռանա ու մերոնք նրան չեն բռնի:

— Թող գնա, կորչի'... — զայրացկոտ վրա բերեց Սոսիկը:

— Անպատի՞ժ մնա...

Սոսիկն զգաց, որ սխալվել է: Իսկապես, ինչպես կարելի է Սանթրոսին անպատիժ թողնել: Չէ՞ որ սարում խոսում էին, որ հայրենիքին դավաճանել է: Դուցե հենց իր հոր հետ է եղել ու նրան մենակ թողնելով վտանգի մեջ, աղատել է սեփական կաշին: Իհարկե, պետք է պատժել, խի'ստ պատժել:

— Բա ի՞նչ անենք, — հարցրեց Սոսիկը մտազբաղ, նա ոչ մի ելք չէր գտնում:

— Թե որ կարենայինք նրա հրացանը գողա-

նա՞լ... ծոր տվեց թենիկն ով բերանը շփփացրեց:

— Ախր առավոտը կզարթնի, կտեսնի, ոք չկտ, մեղնից կուզի,— հակաճառեց Սոսիկը:

— Թող ուզի, մենք կպահենք ու տեղը չենք ասի,— վճռական վրա բերեց թենիկը,— վախենո՞ւմ ես, բա իմ ախպերն ինչի՝ շվախեցավ,— թենիկի ձայնը դողաց:

Սոսիկը հասկացավ, որ ընկերոջ առաջարկը համարձակ էր և կապված իրենց կյանքի հետ: Նա լուր մնաց, անմիջապես շմիացավ թենիկին, գիտեր, որ Սանթրոսը կսպաներ իրենց: Կարո՞ղ է դիմանալ, կպահի՝ գաղտնիքը, վախը չի՝ ստիպի խոստովանել:

— Դե արի, հենց հիմի սողեսող մոտենանք, գողանանք հրացանը, տանենք. հեռու պահենք, — պնդեց թենիկը և արդեն պատրաստվեց գործողության դիմել:

— Կաց մի, թենիկ ջան, — ընկերոջը կանդնեցրեց Սոսիկը, — ախր Վարդազարն ասեց սպասեցեք, մինչև որ կդանք... Ախր մեզ Սանթրոսը կսպանի...

Այս անգամ լռեց թենիկը: Վտանգի մոտիկ

և հավանական լինելը, նրան էլ մի պահ տատառ
նեց: Հեշտ էր ասելը — կսպանի՞... իսկ ինչպե՞ս.
Երեխ իր սուր դանակով, ինչպես ֆաշիստներն են
անում... Բենիկն աշքերը փակեց, պինդ, կարծես
թե այդ երեակայության աշքերն էին: Մինչդեռ
երեխայական վառ միտքը շարունակում էր գոր-
ծել: Ահա՛, իր ու Սոսիկի դիմաց կանգնած է
կատաղած Սանթրոսը, բերանը լայն բացած,
ատամներն արյունոտ... Ահա նա քաշեց դանակն
ու սկսեց կտրել...

Բենիկն այժմ սկսեց ձեռքերը թափահարել,
ասես բզեզների, կամ ճանճերի հետ էր կռվում:
Երեակայության թելը կտրվեց: Բենիկին նորից
սկսեց անհանգստացնել այն միտքը, որ Սանթ-
րոսը պաշտպանվելու համար կսկսի կրակել ու
մարդիկ սպանել: Ո՛չ, այդ թույլ տալ չի' կարելի:
Առանց այլևս սպասելու Սոսիկի համաձայնու-
թյանը, նա սկսեց սողալ դեպի այն կողմը, որ-
տեղ քնում էր Սանթրոսը ավտոմատը կողքին:
Սոսիկը տեսնելով, որ ընկերն անցավ գործողու-
թյան, առանց այլևս տատանվելու հետևեց նրան:
Յուրաքանչյուր փորսողից հետո անշարժանում
էին ու հերքերը պահած լսում. և երբ զգում էին,

որ վտանգ չկա, շարումակում էին նույն ձեռք։
Այնպես որ Սանթրոսին մոտենալը տևեց երկար
ժամանակ։ Առաջինը մոտեցավ Բենիկը և որքան
մեծ եղավ նրա զարմանքը, երբ իր սովորական
տեղում Սանթրոսին չգտավ։ Շոշափելով գտավ
ավտոմատը, իսկ տերը չկար։ Սոսիկը մոտեցավ
նրան։

— Էստեղ չի'...

— Հիմի կգա...

— Ե'տ, Ե'տ... հրացանը բռնի՛ր...

Եվ արագ ետ սողացին։ Բենիկն անմիջապես
ավտոմատը տարավ հեռու և թաքցրեց մացառ-
ների ու թփերի մեջ։

— Քիչ հետո կգա, կքնի, ատրճանակները
կգողանանք, — վերադառնալով ասաց Բենիկը։

— Ո՞ւր է գնացել, — մտածում էր Սոսիկը և
հանկարծ նրան թվաց, թե ինչ որ մեկն իրենց
գլխի վերևում շարժվեց։ Սարսափահար նայեց
այն կողմը, բայց ոչինչ կասկածելի չնկատեց։
Մթությունը թանձր էր և տեսնել որևէ բան ան-
կարելի։

Մի ժամից հետո երեխաները նորից սո-
ղացին դեպի ավաղակի որջը, սակայն այս ան-

գամ էլ նրան շգտան։ Անհանգստությունը պաշառեց նրանց։ Ուր կարող էր գնացած լինել։ Ավտոմատը թողել էր, նշանակում է չեր հեռացել։

Նորից ետ սողացին ու որոշ ժամանակից հետո, մի անգամ ևս փորձ արին մոտենալ Սանթրոսի «ննջարանին»։ Դարձյալ չկար։ Իսկ գիշերն անցնում էր։ Ծառերի խիտ սաղարթների միջից երևում էր դալկացող երկինքը։ Սոսիկն ու Բենիկն արդեն որոշ շափով իրար տեսնում էին։

Այլևս վտանգավոր էր, Սանթրոսը կվերադառնար ու իրենց կրոներ հանցանքի մեջ։ Նրանք շտապեցին իրենց տեղը... Եվ հանկարծ տեսան, որ այնտեղ կանգնած է նա, Սանթրոսը...

— Դե՞, հիմի ես ձեր կաշին կքերթեմ, ստանի՛ ճտեր...— Հնչեց նրա սպառնական ձայնը։

Ամբողջ գիշերը Սանթրոսը երեխաներին հետեւել ու լսել էր նրանց խոսակցությունը։ Զեվանալով քնած, ըստ իր սովորության խոմփացնելով, քիչ հետո վեր էր կացել, խավարի՝ մեջ աննկատելի մոտեցել Սոսիկին ու Բենիկին, և շարախնդությամբ ամեն ինչ իմացել։ Զարախընդության հետ միասին դավաճանին պաշարեց մի

ուրիշ, ավելի զորեղ զգացմոմք — միայնակ մնաւ լու ահավոր հեռանկարը։ Լսում էր երեխաներին ու միաժամանակ մտածում.

— Ի՞նչ օրի ընկա, որ երեխաների ընկերությունն էլ ինձ համար մեծ բան է դարձել...

Ի՞նչ անի, ո՞ւմը դիմի, ինչպես ազատվի այս սարսափելի մենակությունից, ինչպես իր համար սնունդ հայթայթի ձմռան ցրտաշունչ ամիսներին։ Այսպես էր մտածում Սանթրոսը։ Երբեմն այնպես էր կատաղում, որ քիչ էր մնում տուանց այլևայլության մաքրեր երեխաների հաշիվը։ Այդպես էլ կաներ, եթե՛նրա համար մի կարևոր հարց մութ շմնար — կարո՞ղ էր շարունակել այստեղ ապաստանել, թե՞ Սոսիկն ուր հարկն է արդեն հայտնած լինելով, իրեն վտանգ էր սպառնում։ Երեխաների խոսքերի մեջ իրեն անհանգստացնող այդ հարցի պատասխանը շգտավ։ Եվ ահա, գերագույն ճիգերով համբերելով ուզում էր մինչև վերջ պարզել երեխաների մտածածն ու վարքը։ Երբ ավտոմատը հափշտակեցին, ցանկացավ միջամտել սակայն վախեցավ, որ խավարի մեջ նրանց դժվար կլինի բռնել, կարող էին փախ-

չել ու թաքնվել: Իսկ հիմա լուսանում էր: Արդեն
կարելի էր զայրույթին ասպարեզ տալ:

Սոսիկն ու Բենիկն անակնկալից այնպես
շշմեցին, որ փախուստի ոչ մի փորձ չարին:
Նրանք քարացած նայում էին իրենց հակառակոր-
դին: Լուսաբացի աղոտ լույսի տակ նրանք տես-
նում էին Սանթրոսի գիշատիչ աշքերի փայլը: Նա
ամբողջ մարմնով լարված էր, այնպես, ինչպես
վագրը իր զոհի վրա հարձակվելու պահին:

— Եկե՞ք, մոտեցե՞ք, քաջե՞ր... Սանթրոսի
գլխին օյին էիք ուզում խաղալ, հա՞... զենքերս
փախցնել էիք ուզում հա՞... ինձ ծախել էիք ու-
զում հա՞... Դե, եկե՞ք, մոտեցե՞ք, էնպիսի խաղ
սարքեմ ձեզ համար ո՞ր...

Ու հանկարծ կատվի նման ցատկելով բըռ-
նեց Սոսիկի և Բենիկի ձեռքերից, կարծես երկա-
թե օղակներ լինեին—երեխաները ցավից ծա-
մածովեցին, բայց ձայն շհանեցին:

Սանթրոսն արդեն գտել էր Սոսիկից ճշմար-
տությունը կորզելու միջոցը: Նախ փորձեց քաղցր
լեզվով:

— Սոսիկ ջան, արի ճշմարտությունն ասա,

սարը որ գնացիր, իմաց տվի՞ր... զրա համա՞ր
շուտ ետ եկար... Գալու են ինձ բռնելո՞ւ...

Սոսիկը մի հայացք նետեց թենիկին, հաս-
կացավ, որ հարկավոր է լռել:

— Քեզ հետ եմ...— հարցապնդեց Սանթրո-
սը:

— Զէ՞ , քեռի Սանթրոս... գնացի, ուզածդ
վերցրի ու եկա... մարդ էլ չիմացավ...

— Սո՛ւտ ես խոսում, թուզա...— կատաղած
աղաղակեց ավաղակը:

— Սուտ չեմ ասում...— համարձակ ու
հպարտ պատասխանեց Սոսիկը:

— Սո՛ւտ ես ասում, իմաց ես տվել...—
Սանթրոսը ցանկանում էր անընդհատ հարցերով
կոտրել երեխայի համառությունը, նրան շփո-
թեցնել, սակայն Սոսիկն արիացել էր: Նրան թր-
վաց, թե վտանգ է սպառնում իրեն հանձնած
հոտին, և ահա, սոված գայլը եկել էր վնասե-
լու... ի՞նչ պետք է աներ—փախչե՞ր... կկովի՛,
ամեն ինչ կանի, միայն թե վնաս չհասնի հո-
տին:

Սանթրոսը Սոսիկից անցավ թենիկին:

— Դո՞ւ ասա թենիկ, դու նրանից խելոք ես
երևում...

Թենիկն արհամարհեց, բոլորովին շպատա-
խանեց։ Սանթրոսի համբերությունը հատավ։

— Դե հիմի տեսնենք, թե դուք ձեր հալով
ինձ ո՞նց չեք պատասխանի։ Եվ Սանթրոսն ան-
ցավ իր հրեշտավոր ծրագրի իրագործմանը։


Արդեն բոլորովին լուսացել էր, սակայն օրն
ամպամած էր և բոլոր նշանները ցույց էին տա-
լիս, որ անձրև է լինելու։

Նա թենիկին քաշեց ու կապեց հաստաբուն
ծառից։ Սա հնազանդվեց։ Նրա աշքի առաջ էր իր
հերոս եղբայրը — ուզում էր արժանի լինել նրան։
Իսկ Սոսիկն անհանգիստ աշքերով հետևում էր։

— Հրացանն ո՞ւր տարար, — հարցրեց Սանթ-
րոսը թենիկին։

Թենիկը պատասխանեց, որ չգիտե, թե մթու-
թյան մեջ ուր գցեց։

Սոսիկը կարծելով, որ թենիկի ասածն ան-
կեղծ է, անմիջապես պատրաստակամություն
հայտնեց գտնելու և վազեց այն կողմը, ուր գի-
շերը թենիկը հրացանը թաքցրել էր։ Սոսիկի այս
արարքը հույս ներշնչեց Սանթրոսին — ուզեմն նը-



բան կարող էր խոստովանեցնել։ Իսկ Բենիկը
որքան ուժ ուներ Սոսիկի ետևից գոռաց։

— Չբերե՞ս, չբերե՞ս, չբերե՞ս...

Սոսիկը թեև լսեց, բայց այլև չուզեց ընկե-
րոշը հնագանդվել։ Զգում էր, որ շատ վատ բան
է կատարվելու։ Հույս ուներ ավտոմատը վերա-
դարձնելով մեղմել Սանթրոսի զայրույթը և գոնե-
ժամանակավորապես շահել նրա ներումը։ Ավտո-
մատ հրացանը գտավ և ուրախ ետ վազելով
հանձնեց Սանթրոսին։ Սա ժպտաց, շոյեց Սոսիկի
գլուխը։

— Ապրե՞ս... որ էղքան հասկացող ես,
ասա, իմաց ես տվել ձերոնց, գալո՞ւ են...

Նորից նույն հարցը։

— Չէ, իմաց չեմ տվել...— կտրուկ պա-
տասխանեց Սոսիկը։

— Ելի՞ խաբում ես... լա՞վ..., — Սանթրոսի
աշքերը մթնեցին։ Նա գրպանից հանեց ֆիննա-
կան դանակը, դուրս քաշեց կաշվի պատյանից ու
մոտեցավ Բենիկին։

Սոսիկը քիչ մնաց ճշար։

— Բան չկա, Սոսիկ, բան չկա, — աղաղա-
կեց Բենիկը։

— Թան շկա, հա՞, հիմի կտեսնենք...—» Ու
Սանթրոսը դանակը դրեց երեխայի ճակատին,—
ասա՛, թե չէ կկտրեմ...

— Ֆաշիստներից ես սովորել, ավագա՛կ,
գո՛ղ, հայրենիքի թշնամի՛...— Հեծկլտալով, զայ-
րույթով, սրտապատառ գոռաց Սոսիկը,— թո՛ղ,
թո՛ղ,—ու հարձակվեց Սանթրոսի վրա: Սա նրան
այնպես հրեց, որ երեխան ետ-ետ գնալով գլոր-
վեց փշոտ մացառների վրա: Սոսիկի երեսն ու
ձեռքերն արնոտվեցին: Նա չհանգստացավ: Սա-
րեցի տղայի անզուապ ցասումն էր բորբոքվել
նրա մեջ: Նա նորից հարձակվեց և այս անգամ
այնպես կախվեց խոշտանգողից, որ վերջինս
դժվարությամբ ազատվեց նրանից:

— Ասում եմ խոստովանիր, թե չէ հիմի
կմորթեմ...—սուր դանակի թեթև հպումից Բենի-
կի ճակատից արյունը վազեց ու ճյուղավորվեց
դեմքի վրա:

Սոսիկը հուսահատ դրության մեջ էր: Ամ-
բողջ ձայնով սկսեց գոռալ—

— Հասե՞ք, հասե՞ք, հասե՞ք...

— Ուրեմն իմաց ես տվել, հա՞՛, ձեզ օդ-
նության պիտի գան, հա՞՛...— իր հարցի պա-

տասխանը գոտած, այլանդակված դիմագծերով
աղաղակեց Սանթրոսը։

Անձրևն սկսեց հեղեղի նման տեղալ։ Ամպե-
րի որոտը խառնվեց անձրևի ահոելի աղմուկին։
Քամի բարձրացավ։ Ծառերն այնպես էին օրոր-
վում, կարծես տեղահան էին լինելու։ Անձրևա-
շուրը լվանում էր Բենիկի արյունոտ դեմքը։ Նա
սկսել էր արտասվել, բայց աննկատելի, քանի
որ արցունքները միախառնվում էին դեմքով հո-
սող անձրևի կաթիլներին։

Սանթրոսն այլևս չգիտեր ինչ կերպ վարվեր։
Այս երեխաների համառությունն ու հերոսությու-
նը, գիտակցությունն ու նվիրվածությունը նրա
համար այնքան անսպասելի էին, որ ձեռքերը
թուլացան։ Նա անձրևից պատսպարվելու համար
վազեց, կուշ եկավ մի սաղարթախիտ ծառի տակ
և շուած աշքերով նայում էր, թե ինչպես Սոսիկը
վազեց դեպի ընկերը, սկսեց նախ քանդել նրա
կապերը, ապա պատռելով իր շապիկի թեր կա-
պեց Բենիկի ճակատի վերքը։

Ապա իրար հենված նրանք շար հայացքով
նայել սկսեցին ծառի տակ իր թաթերը լիզող գա-
ղանին։

Աշքերի ահավոր խաղ էր... նրանց փոխա-
րեն խոսում էր բնությունը...

11. ՎԱԽՃԱՆ

Սոսիկն ու Բենիկը ինքնամոռացության մեջ
էին: Նրանց մեջ առաջացել էր մի զգացում, որ
խորթ է երեխայի համար: Նրանք այս կարճ ժա-
մանակամիջոցում ասես հասունացել էին մի քա-
նի տարով, աճել էր նրանց և՝ գիտակցությունը,
և՝ զգացումները:

Եվ ահա նրանք երկուառվ նետվեցին Սանթ-
րոսի վրա, ո՞չ անձրես, որ բոլորովին թրչել էր
նրանց, ո՞չ աշնանային քամին, որ փշում էր
սաստկությամբ, նրանք չէին զգում: Նրանք մեկ
բան էին ցանկանում՝ զինաթափ անել, անվնաս
դարձնել գալին, որ որևէ կերպ օգնած լինեն
այն մարդկանց, որոնք գալու են: Երեխայական
անհոգությամբ նրանք բոլորովին չէին մտածել
այն մասին, թե որքան ժամանակին են սկսել
իրենց օգնությունը և արդյոք կկարողանան ան-
հրաժեշտ շափով հասնել իրենց նպատակին:
Նրանց պաշարել էր մի մոլուցք, մի խենթ զգա-

ցում, երեխայի վիրավորված, խոցված հոգու եզակի արտահայտություններից մեկը:

Իսկ Սանթրոսը կուշ եկած կարծես սպասում էր նրանց: Ոչ մի ընդդիմություն: Կարծես թե մի ուրիշ մարդ էր ծառի տակ ծվարածը: Երևում էր որ այդ վախկոտի ձեռքում զենքը ոչ մի ուժ չէր ներկայացնում, այդ զենքն ավելի շուտ իրեն քաջություն և վստահություն ներշնչելու համար էր: Բենիկը մի մեծ քար շպրտեց Սանթրոսի վրա: Հարվածը դիպուկ էր: Սանթրոսը բռնեց գլուխն ու շշմած ընկավ ծնկներին: Երկու ընկեր անմիշապես նետվեցին նրա վրա, խլեցին ատրճանակները, նրա իսկ դանակով կտրելով ուսափոկը քանդեցին փամփշտակալները (որոնք դատարկ դուրս եկան), ապա՝ դիմեցին ավելի համարձակ քայլի. փորձեցին կապկապել Սանթրոսին:

Այստեղ արդեն ավագակը դուրս եկավ իր ընդարմացած վիճակից: Աշ ու ձախ հարվածելով ազատվեց երեխաներից ու սկսեց վազել, փախչել... Երեխաները հետևեցին նրան: Անձրեւ մտրակում էր, քամին, որ փշում էր դիմացից վազքը դժվարացնում էր, սակայն Սանթրոսը վազում էր, չգիտեր, թե ուր, բայց փախչում էր:

Անասնական վախը նրան բոլորովին խեղճաց-
րել էր։ Նա իրեն այնպես էր զգում, ինչպես մար-
տադաշտում։ Նրան թվում էր, թե իր ետևից
ահռելի տանկերն են գալիս, որ նրանք կհասնեն,
կձգմեն, եթե չկարողանա փախչել։ Բոլորովին
մենակ էր, շուներ ոչ մի հենարան, ոչ մի ապա-
վեն... նրա հենարանը ոտներն էին, որոնք թու-
լանում էին, նրա ապավենը՝ միտքն էր, որ մթա-
գնում էր։ Ինչպես ծառերն ու մացառներն իրար
էին հաջորդում, այնպես էլ իրար էին հաջորդում
Սանթրոսի կյանքի ուղենշանները։ Դեռ մանկուց
վախկոտ էր, գիշերները մենակ դուրս չէր գա-
լիս։ Սանթրոսը դպրոցում քիչ մնաց։ Սիրում էր
գողովթյուն անել։ Մեծանալուց հետո էլ հերո-
սովթյան, հայրենիքի, հարազատության ու բարե-
կամովթյան գաղափարները խորթ էին նրա հա-
մար... Գնաց ուազմաճակատ։

Առաջին իսկ վայրկյաններին նրան պաշարե-
ցին վախն ու սարսափը։ Նա սկսեց գլուխ պա-
հել, թաքնվել ուր պատահեր։ Վերջապես նա
վճռեց ազատել իր կաշին, իր ողորմելի կյանքը։
Հարմար առիթ գտնելով Սանթրոսը փախավ։ Եվ
փախչելուց հետո միայն գլխի ընկավ, որ տեղ

շոմի գնալու, որ հարազատները նույնիսկ նրան
տուն չեն ընդունի: Հասնելով իր վայրը որոշեց
մտնել անտառ, մի կերպ պահպանել իր գոյու-
թյունը մինչև պատերազմի վերջը: Կարծում էր,
որ պատերազմից հետո իրեն մեղադրողներ չեն
լինի:

Ու հիմա էլ փախչում էր, բայց էլ ո՞ւր, էլ
որտե՞ղ գտնի հանգստություն...

— Կանգնի՛ր...

Նա լսեց, նա շարունակում էր վազել...


— Կանգնի՛ր...

Նա թրչված դեմքը բարձրացրեց և նայեց
շորս կողմը: Շրջապատված էր անծանոթ մարդ-
կանցով: Անտառից դուրս էր եկել, գտնվում էր
այն ձորի մեջ, որը տանում էր Գյազբել սարը:

Այդ մարդիկ հեծյալ միլիցիոներներ էին:
Խսկ նրանց մեջ Վարդազարը, Բախչի ամին, շատ
ծանոթ դեմքեր, իր համագյուղացիները, որոնք
բոլորը ցասկու, անզիջող հայացքներով նայում
էին իրեն: Սանթրոսն այլևս ճանապարհ չուներ:

Սոսիկն ու Բենիկը թուլացած փաթաթվեցին
Վարդազարին:

Առաջ եկավ Բախչի ամին: Մռայլ էր նա,



Հոնքերն ամպի սպիտակ քուլաների նման իշել
էին մանր աչքերի վրա։ Խիտ բեխերը ցնցվում
էին։ Հուզված էր։

— Էդ դո՞ւ ես... Բարո՞վ էս էկել, մեր գըլ-
խի՞ն, մեր արևի՞ն, մեր պարծա՞նք, թառլա՞ն
Սանթրոս... Էդ դո՞ւ ես... Այ, յո՞թը տղով սեղան
նստես, օղորմի հորդ հոգուն, մեռնեմ գալածդ
ճամբին, որ դու ես եկել, հալալ հաց ուտե՞ս,
կանաչ-կարմրի՞ն արժանանաս...»

Բախշի ամին մի պահ լռեց։ Ոչ ոք շընդհա-
տեց նրան։ Անգամ անձրեւ դադարեց, քամին
փեշերը քաշեց։ Տիրեց մի խորը, ահավոր լռու-
թյուն։ Իրար դեմ առ դեմ կանգնած էին ժողո-
վըրդական զայրույթը և պատժի արժանի դավա-
ճանությունը։

— Բարո՞վ ես եկել...— շարունակեց Բախշի
ամին, — ընկեր, նամուս, հայրենիք թողած եկել
գելի պես անտառ ես մտել հա՞... Բա մեր գեղն
Արտավազդի նման հերոս տա ու դու գաս ու մեզ
խայտառակ անե՞ս, բա էն կտրիճ տղան իր
արյունը տվեց, որ դու, արնախո՛մ գազան,
խմե՞ս, հարբե՞ս, գաս քո գյուղի ունեցվածքը
գողանա՞ս, սև օձի նման պատերը քաշվե՞ս...»

վա՞յ, վա՞յ, շնասնեի էս օրին, շտեսնեի էն,
ինչ որ հիմի տեսա... Փափախս բարձր էի դնում,
հպարտ էի ման գալիս, Գյազբելի վրա թագավոր
էի ինձ կարծում... Էս ի՞նչ արիր, ապականեցիր
իմ սիրած Գյազբելը, ապականեցիր մեր տոհմը,
իմ անունը... Այ ժողովուրդ, էլ ի՞նչ եք կանգնել,
ես վերջացրի, տարեք, ձեր արդար դատաստանը
սրա մեղավոր գլխին... — նա լոեց:

Սոսիկն ու Բենիկը վազեցին դեպի իրենց
սիրելի Բախչի պապին և փարվեցին նրան:

— Ապրե՞ք, երեխեք... Դուք որ կաք, ես
էլի՛ բախտավոր եմ,— ասաց Բախչի ամին և
համբուրեց խիզախ երեխաների ճակատը:

Կեսօրյա արելը դուրս եկավ նահանջող ամ-
պերի տակից:

Ահա այսպես ավարտվում է իմ պատմու-
թյունը երկու պատանի հերոսների մասին:

1944 1945 111

Գորիս—Երևան

ԳՐԱԴԱՐԱՆ

ՖՐԱՆԴԻՍԱՆ

Դ. 16

ԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամառը Զանգեզուրում	3
2. Այդ օրն ուրախ էր	13
3. Ի՞նչպես պատահեց	19
4. Նոր հանելուկ	23
5. Անհայտացավ	30
6. Հետքերով	36
7. Մի թակարդում երկուսը	44
8. Անծանոթը ճանաչվեց	55
9. Խելոք ծրագիր	66
10. Սպառնալիքի տակ	84
11. Վախճան	97

Նկարները՝
ԱՇՈՏ ՄԱՄՍՋՈՆՅԱՆԻ

Պատ. Խմբագիր՝ ԷԴ. ԹԱ ՓԶՅԱՆ

ՎՃ 00368. Պատվեր 425. Տիրաժ 3000. 3¹/₄ տպ. մամ.՝
Հեղինակ. 2,5 մամ.՝ Ատորագրված է տպ. 20/1—46 թ.

Պոլիգր. Հրատարակչ. Վարչ. № 1 տպ. Երևան, 1946,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041272

9162 4 n.

